



Թիի 7

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳՐԱԳԵՏ

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

20 Մարտ 1899

Թ Ի Ի 7 . Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տխրութեան դեմ
Տ. Ք.
ՏԱՂԱՐԱՆ
Ներածութիւն
ՀՈՒՐ ՀԱՅՐԱՆ
Խոհեր ՈՒԿԱՑԻԿ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏՆԵՐԸ
Դարավերջիկ հիւանդութիւնները
Գեղարուեստներու ու գրականութեան մէջ
ՄԻՔԱՅԷԼ ՇՄՏԱՆՃԵԱՆ
ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ
Մանուկներու հաճոյքի զգացումը

Խօսուած լարեր ու բրբռունք բելեր
ԿԱՐՕ
Դերասանութիւն (վեպ)
ԼԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ
ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀ
Ջղային կնոջ առողջապահութիւնը
ՏՈՔԹ. ԴԱԻԻԹԵԱՆ
Միջազգային քաղաքականութիւն
Մ. Շ
Վերջին հրատարակութիւնները

ՄԱՍԻՍ Ի ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

Միանգամ ընդ միշտ կը ծանուցանենք թէ Խմբագրութիւնս պարտաւոր չէ իրեն ուղղուած եւ հրատարակութիւնը խնդրուած յօդուածներու հրատարակուելու կամ չի հրատարակուելու մասին պատասխանել :

Մաղցիսա , Մ. Ե. — Նոր բաժանորդին թերթերը կը ղրկուին թիւ 1էն սկսեալ : Տակաւին մեր ձեռքը չհասած յօդուածներու մասին զատառտան չենք կրնար ընել :

Արաբկիր , Մ. Վ. — Ձեր խնդրածին համեմատ, առկէ վերջը թերթերը ուղղակի Ձեր հասցէին կը ղրկուին հաւաքարար : Գործակալի մասին Ձեր կարգադրութիւնները սիրով կ'ընդունինք :

Մալխարա , Մ. Ա. — Ձեր դիտել տուած կէտերը արդէն « Մասիս » ի ծրագրին մէջ են : Յր. ուսուցչին յօդուածները չկարգացած բան մը չենք կրնար բռնել :

Նիկովիդիա , Գ. Կ. — Ձեր ուղած թիւերը ղրկուեցան :

Տիարպէրի , Գործակալ. — Արձանագրեցինք Նոր բաժանորդները :

Կարին , Մ. Ա. — Նոյնպէս : Ձեր փափաքը ամէն կերպով գոհացնել առ այժմ կարելի չէ : « Դերասանութիւն » ի մասին Ձեր առաջարկին յառաջիկային կը պատասխանենք :

Մարգուան , Գործակալ. — Նոր բաժանորդներուն թերթերը ղրկեցինք : Կը ցաւինք որ մեր բարեմտութեամբ զրամները վիշտ պատճառած են : մեր նպատակն է միայն օգտակար ըլլալ :

Խաբբեղ , Ռ. Զ. — Ստացանք Ձեր 1/13 մարտ թուակիրը : Յ. Յ. ի մասին Ձեր առաջարկը սիրով կ'ընդունինք :

Եօզղատ , Բ. Գ. Մ — Կ'ընդունինք Ձեր գործակալութիւնը, Եօզղատի մէջ բաժանորդ չունինք : Բաժանորդագրութեան համար պահանջուածը արդէն զեղջուած դին մը ըլլալով չենք կրնար Նոր զեղջիւր ընել : Ձեր հաշուին բաժանորդագիրը գանձած ենք : վարժարանին համար առանձին թերթ չենք ղրկած ցարդ , պէ՛տք է ղրկել : Նոր բաժանորդին 7րդ թիւէն կ'սկսինք ղրկել :

Սիլվիի , Գործակալ. — Ձեզ ղրկուած ընկալագիրներու փոխարէնն է 270 ջրէ կ'պատանք որ չուսով Նոյն գումարը ճամբայ հանէք : Ձեր գրութեան մասին կը գրենք պատեն առթիւ :

ՄԱՍԻՆ

ԿԻՍԱԿՆԱԵԱՅ  ԳԱՅՂԷՍ

48^{րդ} ՏԱՐԻ ԹԻԻ 7

ՆՈՐ ՇՐՋԱՆ

20 ՄԱՐՏ 1899

ՊԱՏՈՒԱԿԱԼ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բացուած է պատուաւիտ թաժանորդագրութիւն
Գաւառներու եւ Պօլսոյ աղքատ դպրոցներուն եւ որ-
բանոցներուն ձրի “ Մասիս ”, որկերս հաւնար:

Հետեւեալ անձերը տուանձնած են .

Մասիսի իւրագրութիւն 10 օրինակ

Կրթութեան բարեկամ վր 2 Օտմ. ոսկի փոխան
4 օրինակի



ՏԽՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ

Տ . Ք .



ՂԱՅՈՑ կրթութեան պզտիկ խնդիր մըն է, զոր կուգեմ « Մասիս » ի ընթերցողներուն ուշադրութեանը յանձնել, կենցաղագիտութեան խնդիր մը գրեթէ, որ սակայն մեծ ազդեցութիւն ունի անոնց նկարագրին վրայ:

Ամէն անգամ որ օտար տղաքներու իրենց ծնողացը հետ խօսակցութեանը նւնկնդիր կ'ըլլամ, ամէն անգամ որ կը տեսնեմ անոնց համարձակ և ազատ վարմունքը օտարներու, նոյն իսկ իւրենց առաջին անգամ տեսած օտարականներուն հանդէպ (համարձակութիւն մը զոր չմերժեք երբեք ճշմարիտ քաղաքավարութիւնը), ամէն անգամ որ կը լսեմ իրենց դուարթուն քրքիչները, անմեղութեան այն ոսկեղնիկ դայլայլիկները, որոնք զուարթութիւն կ'ազդեն ամենէն խոժոռացած մեծերուն ալ, անկարելի կ'ըլլայ ինծի բաղդատութիւնը չընել մեր տղոց մեծամասնութեանը

հետ, վարանկոտ, վախկոտ և տկար, որոնք անդին կը դառնան խնդարու համար, և բանջարի պէս կարմրելով գիտինք կը նային երբ ամենապարզ հարցում մը ուզողի իրենց:

Կը յիշեմ այն բոլոր նեղութիւնները զորս հարկւրներով քաշած եմ քիչ շատ ծանօթ տղաքներու իրենց զիտցած մէկ ուռնաուորը արատասանել կամ մէկ երգ երգել տալու համար: Եւ աւելի առաջ երթալով կը յիշեմ նաեւ այն հազար նազանքները, քաղաքավարութիւն համարուած այն դժկամակութիւններն ալ, զորս մեր օրիւրոյններէն շատերը կը ցուցնեն երբ դաշնակի վրայ եղանակ մը ածել կ'առաջարկուի իրենց:

Մեր տղոց այս անխմաստ, այս թմրեցուցիչ ամօթխածութիւնը, մեր նկարագրին մէկ մասն է, եւ անշուշտ անոր ամէնէն աննպաստ մասերէն մէկը:

Ուրախութիւնը տեսակ մը յանցանք է մեր հին ըմբռնումով, լրջութեան կարեւորագոյն նշանը կը համարենք. յաւիտենական լալիանի գիւմազութիւն մը՝ որուն վրայէն ժպիտի հով մը շանց-

նիր երբէք, և կը կարծենք թէ կեանքի մէջ յաջողութիւնը այն ատեն ապահով է, երբ ամէն մարդ համոզում գոյացնէ թէ «խնդալու պէս պարագ բաներու» կարեւորութիւն չենք տար երբէք:

Այս սկզբունքները, զորս մեր սեղանաւոր եւ փերեզակ պապերը մանաւանդ երկխոսութեամբ կը յարգէին իրենց ընչեւորութիւնը ծածկելու եւ ստակին տոկոսը կամ ապրանքին գինը քանի մը զրուշ աւելի փրցընելու համար, մեր նախնիներից գրող կարգացող սերունդը յաւերժացող բոլորովին տարբեր ազդեցութիւններու տակ՝ բռնաբերող գրականութիւնը, չափազանց յարում մը տխրունակ վիպերգներու (romance), *Saule pleureur* ք, և բոլոր արտասուքով և հառաջներով խառնուած բաները՝ զորս քնարերգականութիւնը (Lyrisme) հնարած է:

Կը յիշեմ որ իմ տղայութեանս՝ զրազէտի կամ բանաստեղծի համբաւը երբէք կատարեալ չէր համարուէր մեր մէջ, առանց արիւն թքնելու և թուքախտի աւելի կամ նուազ իրական արարողութեան մը վտրով և թմբուկով աշխարհի ծանուցուելուն, առանց ուսնաւորութեան մը որ պէտք էր պատերազմելու երեսը և առանց անարիւնութեան նուազիւստութեանը որ անհրաժեշտ էր աչքերուն մէջ, մեր նկարագրին ազդած է այն ակնութիւնը՝ որ կը յաւիտենականանայ մեր բարքերուն մէջ, և զոր՝ ապուշ ամչկոտութեան մը հետ ջամբած իբր կարեւոր ժառանգութիւն մը կը փոխանցենք մեր պզտիկներուն:

Աւ միշտ ակաւոր տղաքներու սերունդ մը կը կազմենք, գլխուն՝ զարնուածներու սերունդ մը, որ խնդալու կը խաղի, և որուն ամօթխածութիւնը արդէն բաւական պատճառ մըն է կեանքի պայքարին մէջ որ և է ձեռներեցու-

թեան համարձակութիւնը չունենալու:

Մեր տղոց մեծամասնութեանը կըրթութեան այս պակասը՝ զոր այնքան անգամ տեսած եմ բարեկեցիկ ընտանիքներու դաւակայ վրայ իսկ, իր բոլոր սրտմաշուք տխրութեամբը միտքս ինկաւ, երբ վերջերս գաւառական գիշերօթիկ դպրոցներէն մէկուն մէջ կատարուած հանդիսաւորութեան մը նկարագրութիւնը կարդացի, նկարագրութիւն մը որուն մէջ՝ բարեմիտ թղթակից մը ուրախութեան հանդէս մը տեսեղեկագրած ատենը, ամէնէն տխուր բաները կը պատմեր:

Ամանորի նկարագրութիւն մըն էր, կարծեմ, որուն մէջ կը յիշուէր դժբաղդաւոր մը առաջնորդ սրբազանին ուղղած շնորհակալութեան մէկ ուղերձը այդ հանդէսին կարգադրութիւնը հրամայելուն և զիրենք, անծնողք, աղքատ տղաքը, օրուան հանդիսաւորութեանը մասնակից ընելուն համար, և որուն մէջ կը պատմուէր առաջնորդ սրբազանին «մխիթարիչ» պատասխանն ա՛յ. «երբէք չպիտի մոռցուին, խնամքը չպիտի պակսի երբէք իրենց»:

Ամանորի օրով ի՞նչ տարօրինակ միջոց մը իրենց վիճակին տարբերութիւնը չիշխեցնելու այդ խեղճերուն և որքան կատարեալ դրութիւն մը, թէեւ անգիտակցաբար և բարեմտաբար հնարուած, լալկաններ, «ես մեղաւոր»ի ձեւով մարդեր հասցնելու:

Ձէ, այս չէ որ պէտք է ընել, մեր աղքատ դաւակներուն. եթէ հանդիսաւորութիւն մը կ'ուղէք կարգադրել, ուրախութեան երգեր դալալալել տուէք անոնց, չաքարներ, պտուղներ ու կարկանդակներ բաժնեցէք որ ուտեն, հրաւիրեցէք որ ցատկաւոր ձեր ներկայութեանը և իրաւցնէ շահագրգռուեցէք անոնց ուրախութենէն ու պարերէն ու ետքը օրհնեցէք զիրենք և բացատրե-

յէք թէ՛ Աստուած մարդոց շնորհած է բոլոր բարիքները . և թէ՛ Աստուծոյ հաճելի տեսարան մըն է որ մարդիկ ուրախութեամբ վայելեն զանոնք ու դոհանան : Վստահ եղէք որ ասանկով լաւագոյն կերպով մը կատարած կ'ըլլաք ձեր պարտքը :

Եւ, Աստուծոյ սիրուն , տխուր բաներ մի ըսէք ու մի ըսել տաք տղոց . ձգեցէք որ խնդան : Մտքի հաւասարակշռութիւն ունեցող մարդու մը առողջ կենցաղը , որ վայելմունքի (նիւթական և բարոյական վայելքներուն) փափաքն ու զգացումը կ'արտայայտէ , կեանքի գիտութեան կէսն է արդէն :

ՏԱՂԱՐԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՀՈՒՐ ՀԱՅՐԱՆ

Աշխատութեան համար իր հրաւերին վրայ՝ մեր Շամտանգեանի « Մասիս » ին անտիպ բանաստեղծութեանց , Հաւաքածոյն տուած ժամանակն անդէպ չեմ համարիր երկու խօսք ընել բանաստեղծութեան ու բանաստեղծներու վրայ .

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ի՞նչ է ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ



ԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ մարդու խօսքն է , երբ ներոյժ բերկրանք կամ ներոյժ տառապանք

կը զգայ :

Պարն ու քնարը բանաստեղծական խօսքէն անբաժան են ի սկզբան : Աչքերնուդ առջեւ բերէք խրոններու խումբ մը փանայիք մը օր : Ոտքերնին կը շարժի , չըթունքնին

կը շարժի , թեւերնին կը շարժի : Կը պարեն , կը նուազեն , կը նուաղարանեն : Հազարաւոր տարիներու հետեւին ունին իրենց պարին ձևն , իրենց նուագն և անոր եղանակն , հուսկ ապա իրենց նուագարանն : Երբ վայրենեաց խումբ մը վայրի գազան մը զերէր , երբ արի երիտասարդ մը դեղանի աղջիկ մը առեւանդէր , երբ այդ մը կամ աղբիւր մը գտնուած էր , երբ՝ հզօր մը՝ թեւով կամ գէմքով՝ հասարակ մահկանացուներուն հիւսցում աղղած էր , երբ այդ հզօրն աշուրներն ընդ միշտ արեգական կը փակէր , երբ անոր ճեւտ մը կը ծնանէր , երբ մարդն հուրի ու ջուրի կը կարօտէր , երբ արշալոյսներն ու վերջալոյսները լոյս կը հոսէին մութին վրայ որ անդի կուտար , երբ արեւը վարդամոլոց ու լուսինն աստեղատանց ընդմէջ կը փայտատակէր , նախնական մարդիկ աղաղակներ կ'արձակէին : Այդ աղաղակն էր երկրի , հրճուանաց , հայցման կամ հիացման , որ՝ կենդանական բջիջին նման պարզ ու զրկէ ձեւազուրկ՝ հեղհեղէ ձեւ բնդարձակութիւն , նրբութիւն ու ներդաշնակութիւն կը ստանար : Հին խորոյն ձայնարկութիւններէն մինչեւ Գողթան երգերն և Ալիշան , Ափրիկեան հրոսախումբերու ճչերգերէն մինչեւ Բիկ-Վէտայի ու Վեռլէնի աղօթերգերն ու քերթուածները՝ բանաստեղծական խօսքը կը զարգանայր կենաց պարանոցներուն համեմատ բանաստեղծական խօսքը կը սղի կամ կ'ընդլայնի , միաձայն է կամ բաղմոձայն , մարդկային է կամ սրբազան աստուածային , խինդ է կամ եղերգ և ողբերգութիւն , քնարերգութիւն է կամ զիւցազներգութիւն , հովուերգութիւն է կամ հոգեւորգութիւն , արձակ քերթուածն է անյանդ կամ հնչեակն է ճոխայանդ կատարելայանդ :

Բանաստեղծութիւնն , ինչ համար , մարդկային հոգւոյն երկու գլխաւոր փոփոխութեանց համեմատ երկուքի պէտք է բաժնուի . զուարթ և տխուր : Քրիստոնէութենէն առաջ բանաստեղծութիւնը զուարթ ու տխուր է , կամ մեծապէս զուարթ և անդալալապէս կամ անդիտակցապէս տխուր . քրիստոնէութենէն ետքը տխուր ու զուարթ , կամ հինդուայէ տխուր ու մակերեւութապէս զուարթ : Միջին կամ չէզոք բանաստեղծութիւն մ'ա

կայ, որ անզգացներուն (Impassible) բանաստեղծութիւնն է, եւ զոր եւ չեմ կրնար բանաստեղծութիւն համարիլ, եթէ մարմարային անդայ անշարժ ձեւին տակը, չա՛տ խորը չը գտնեմ մարդու հոգւոյն երկու զլիաւոր վիճակներէն մէկը, — պայծառ վիճակն ու մտայ վիճակը, անգիտակից կամ անիմաստասիրական լաւատեսութիւնն ու գիտակից իմաստասիրական կամ փորձառական յոռեանութիւնը, բնապաշտութիւնը կամ բնական դոբութեանց անձնաւորումն եղող գիցապաշտութիւնն ու պոետայական կամ քրիստոնէական աստուածապաշտութիւնն . . .

— Ի՞նչ, հոգւոյ մտայ վիճակ, յոռեանութիւն ու պոետայական կամ քրիստոնէական աստուածապաշտութիւն համարժէք համանիշ ե՞նք քեզ համար :

— Այո՛, եղբա՛րք իմ, Առաջին անգամ եւ եկեղեցւոյ մէջ արամութիւն զգացած եմ, որպէս եւ կոչում բանաստեղծի : Ընդհանուր գաղղիական գրականութեան գերագոյն զուգործոյն է Լամառլինի Méditations poétiques-ն, ամենէն խորապէս կրօնական-սիրային բանաստեղծութեանց հաւաքածոյն, որուն ամեն մէկ էջն արցունք կը ծծէ : Իսկ Նաբկային ողբերգութիւններէն զերազանց զիրք ունի՞ Հայ գրականութիւնը :



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԵՌՆԻ՞

Խնդիր եղաւ թէ բանաստեղծութիւնը կը մնանի՞ : Տիեզերաց վրայէն քողը մերկանայով գիտութիւնը, մտածեր են թէ՛ մերկ եւ իրական բնութեան տեսիլն հմայաթափ պիտի ընէր մարդկութիւնն, եւ թեւակտուր բանաստեղծութիւնն ընդ քարշ պիտի զնար ժամանակ մը, մինչեւ որ « վիրաւորեալ արծուին նման՝ թեւաբաց եւ արեգակնապիշ շէջանէր » Ալֆրէտ տը Միւսէի բացատրութեան համեմատ :

Այս երկիւղն անհիմն էր, տո երեւոյթս միայն հիմնաւոր : Բանաստեղծութիւնն, որ մտնուկ մարդկութեան ստաջին արտայայտութիւնն եղաւ պարզ ու միաժիտ, չափահաս

մարդկութեան ալամենէն փառաւոր արտայայտութիւններէն եղաւ : Ծանապարհորդաց Ափրիկէի վայրենի ժողովուրդներու բերնէն քաղած հաւաքած բանաստեղծական՝ կրնայ ըսուիլ միարջիշ հատուածներէն մինչեւ Ասիական առաւել աղնիւ եւ առաւել օժտեալ ցեղերուն քնարերգական հաւաքածոներն՝ որոնց գերագոյնն է Րիկ Վետան, որպէս եւ Սեմական գրականութեան վսեմ անջ հրաշակերտն՝ Աստուածաշունչը, բանաստեղծութիւնն որքան կը փափկանայ, որքան կը ճոխանայ, որքան կը բարձրանայ, որքան կը զարգանայ ի մի բառ : Երգող ժողովրդեան բարքերն ու զինքը շրջապատող բնութիւնն որքան աւելի հաւատարիմ ու կենդանի կը պատկերացնէ : Հնդկի ու Եբրայական բանաստեղծութիւնն այնպիսի՝ ճիշեր կ'արձակեն երբ երբեմն, այնպիսի՝ խորութիւն մը կը յայտնեն, որ ինչեւապես երբորդ դարու մարդը կը զարմացնեն :

Հելլէն բանաստեղծութիւնն, աւելի ճշգորէն նկարագրական եւ ընդհանրապէս առաւել իմաստասիրական, սեռերու աւելի յստակ բաժանմամբ ու մեծադոյն զարգացմամբ, արուեստի կամ կատարելութեան տեսակէտով կը գերազանցէ Հնդկականն ու Եբրայականը : Եթէ Ենովայ ահաւոր, եթէ Պրահմա՝ եթէ Սուրիեա մեծփայլուչ, սակայն գեղեցիկ են, իսկապէս գեղեցիկ են Յունական գիք ու դիցունհիք : Հոն անհամաչափութիւն, հոս՝ Յոյն արուեստին ու բանաստեղծեան մէջ՝ չափ ու համեմատութիւն, որպէս համաչափեալ ու համեմատեալ է Ելլադա : Յեղին աւելի նուրբ կամ նրբացած է, եւ այդ ցեղին բանաստեղծութիւնն՝ ոչ հերարձակ՝ այլ վարսագեղ է : Ծաշակն իր մեծադոյն յատկութիւնն է : Նոյն յատկութեամբ կը փայլի Հելլեն բանաստեղծութեան եւ արուեստին նուազ հանճարաւոր արու ժողովուրդը : Հոռոմ բանաստեղծութիւնն, Հոռոմ արուեստը :

Միջին Դարուն բանաստեղծութիւնն, հատուածական ու թափառական, մշտայոյզ ու մըշտաժպիտ, մանկունակ բնատիպ չորհրդ մ'ունի : Բաղմուտաբի հակայ անձնաւորութիւն մ'է սովայն Տանդէ, որ վարատական այն Միջնադարեան բանաստեղծութիւնը կը հաստատէ, կը համադրէ, կը հաւատադրէ : Խաւարի թէ՛

լոյսի աշխարհին կը տիրապետէ իր համաթափանց յազթ հանճարը Յովհաննու Յայտնութեան ի վեր մարդկային յղացումն այնքան ընդդաշնուած, այնքան անդրադարձած չունէր Սրբաշուքեան բանաստեղծութիւնը փորձուած էր, կ'ըմբռնուէր, սակայն Գեհնի բացերուն կերպիւ իւրեք գունաւոր քանդակագործումն ու դատապարտեալ հոգիներու վայնասունին երաժշտացումն, ուղին որ կ'իջնայ, որ՝ քանի՜ իջնայ՝ արհաւիրքով կը խորտանայ, բոլոր եղեռներն ու բոլոր եղեռնագործները, բոլոր հեշտութիւններն ու բոլոր հեշտաստուորներն, յաւիտեական չարչարանաց արձակած բոլոր ձայներուն փոթորկանուաք բովանդակ ստեղնաշարն, այս, աշխարհաբար լեզուով, գաւառաբարբառով մը ներկայացուց Արիկիէրի գերազանց արտայայտութեամբ, որովհետեւ ամեն բան կենդանի էր իր շուրջ, լեզուն զոր կը գրէր, եւ Իտալիան՝ որ ճշմարիտ դժոխք մը եղած էր — ինչպէս որ կը ձգտի լինել այսօր՝ այդ գեղասքանչ ու համակրելի երկրին վրայ վերջերս կարգացած մէկ ուսումնասիրութեանս համեմատ :

Աստուածային Կատակերգութիւնը մարդկային բանաստեղծութեան վերջին խօսքն եղաւ — Ո՛հ, բանաստեղծութիւնը չը մնաւ : Եէքսքիր հին ու նոր բոլոր բանաստեղծները գերազանցեց, զրեթէ նոյնքան տիեզերական այլ աւելի խորին քան Տանդէ : Լուդովիկոս Չորեքտասներորդի դարուն գեղեցկագիտական ընդարձակ շարժումն արձակ թէ՛ ոտանաւոր բանաստեղծութեան սքանչելի, մերթ անբաղդատելի գործեր նուիրեց, որոնք Յունական չափն եւ Աստուածաշնչական անհամաչափութիւնը միացուցին մերթ : Մինչեւ ութնետասներորդ դար տարածուեցաւ մեծատարած ու մեծափառ այդ շրջանը, Գիտութեան եւ Իմաստասիրութեան արեղակն, որ կը բարձրանար հորիզոնին վրայ՝ հոն առ յաւէտ իշխուլու համար այլ եւս, ազխաբեր եղաւ բանաստեղծութեան, բանաստեղծութիւնը մնաւ . . . :

Այս . . . Անտէ Եէնիէի հետ, գերազանցորէն բանաստեղծական գլուխ եւ հոգի, շունչը փչեց Բանաստեղծութիւնը (դէ՞թ ի Ֆառնսա) . . . : Սակայն, Ղազարոս

յարութիւն տաւ . . . մեռելներն յարութիւն կ'առնեն երբեմն : Այսպէս եւ յարեաւ Բանաստեղծութիւնն իր քառորդ դարու թմբիւ մը յետոյ : Մետիդասիոն բոեդիքն ափ ի բերան բրաւ աշխարհս : Բիշիներն հոն կ'աղօթեցին, Սափիով հոն կը սիրանուաղէր, Եսայի հոն կը դասար, Յոր հոն կ'անիծէր, Ժողովողն ունայնութիւնն հոն կը թարգմանուէր՝ արդի երկրագլուխն գաւառութեամբ կրկնաւորեալ կրկնազգեցիկ : Հին բանաստեղծութեան թորումն էր, թէ եւս ամեն նուազ ուղղակի կը բլլէր քնարերգակ բանաստեղծներու այն իշխանին հոգիէն, հոգի գերազանցապէս կրօնական՝ մարմնի մը մէջ որ հաճոյք զղացած էր ամեն ճահիճներու մէջ թաթաւելէ սուղուելէ : Կէօթէ, բովանդակ աշխարհի բարձրագոյն բանաստեղծական հանճարը, բոլորովին նոր գործ մը կ'ընէ, ազգային աւանդակէպի մը վրայ կ'առուցանելով գրական ճարտարապետութեան ամենէն հոյակապ շէնքն, ուր սիրահալ խանդավառ բանաստեղծութիւնը կուսական անսպառ արտասուածքով ժպտով մը կ'առաւելացանէ երկրայական իմաստասիրութեան թանձր մթնութեան յատակն, որուն վրայէն ոտքը չը վերցնէր երբէք ամենէն գրական մարդն, նա որ Ողիմպականը կոչուեցաւ սակայն, որովհետեւ Արամազդի դիրքն ունեցաւ միւս զից իր ժամանակակից քերթողաց նկատմամբ : Արֆուտ ար Միւսէ կերպիւ իւրեք մանրանկարային Ֆառնսոյ մը կը գրէ իր Ռոյալն մէջ : Իսկ Ֆառնսոյի նման ազգային աւանդակէպներէ հանուած Նախահարքը Միճքիէ վիշին, ինչ յուզիչ, ինչ յափշտակիչ գործ : Կոպերնիկոս Միճքիէ վիշի հայրենակից էր : Ինչպէս չը կըցաւ բանաստեղծութիւնը մեռել անոր հոգեոյն մէջ . . . Ընդհակառակն՝ Կոպերնիկի գիտութիւնն այնքան ճիշդ, նոյնքան Միճքիէ վիշի բանաստեղծութիւնն եղաւ կիզածիչ ու բարձրաթոյն : Ու քաղաւթութեան հիմնադիր Լափուադիէին հետ չը զլխատուեցան Անտէ Եէնիէի Միւսէի շուրջ ո՞վ կը հաւատար Մուսաներու գոյութեան, երբ Մուսայից հետ այն աննման այն անմահ խօսակցութիւնները բանահիւսեց, որոնք Մայիսի գիշեր, եւն. կը կոչուին : Իսկ Կէօթէ, որ գարուն ամենամեծ գիտնոց եւ Իմաստասիրաց մին էր, ինչպէս


գիտութիւնը նոյն անձին մէջ՝ լսնատառեղ-
ծութեան հետ հաշտ ապրեցաւ, եւ բանաս-
տեղծ անյատարժան, որ իր Վերքերին բն-
թեղիւնն ութն երիտասարդաց վախճանն առ-
թած է ։ Իսկ Պայրընին աղբեղութիւնը գրա-
նութեանց ու ժողովրդոց վրայ ։ Պայրըն, մի-
միայն բանաստեղծ, գրեթէ անդիտակից բա-
նաստեղծ, գրեթէ յիմար ։

Ո՛չ, բայց մը չը մեռնիր, եւ ամենէն
նուազ՝ բանաստեղծութիւնը ։ Բանաստեղծա-
կանութիւնը կենդանեաց վրայ կը նշմարուի ։
Բանաստեղծութիւնը մարդոց մէջ կայ ու կը
զարգանայ ։ արամբանօրէն, եթէ մարդուն
— որպէս Լիզոն կը գուշակէ — աւելի կա-
տարեկազմութեամբ ու զեղով բարձրագոյն էակ
մ'ալ յաջորդէ, ան ալ պիտի ունենայ բանաս-
տեղծութիւն ։

Եւ ինչպէս պիտի մեռնէր Բանաստեղ-
ծութիւնն, որ անմահութիւնն կուտայ ։

Ք Ո Ն Ե Ր

Ս Կ Ե Պ Տ Ի Կ



ԱՆՆԵՐ կան որոնք չար
են եւ էական որոնք լա-
րի, ճիշդ ինչպէս պատեղ-
ներ կան որոնք անուշ կ'ըլ-
լան եւ պատեղներ ալ որոնք լեզի ։ Եթէ, գի-
ղեցկութիւնը, եթէ հանճարը բնածին կ'ըլ-
լայ, ինչո՞ւ համար չըլլան անձեր որոնք
բարի ծնին եւ անձեր որոնք չար ։ Եթէ չար
կամ բարի ըլլալը միշտ կամքի տրոհութեամբ չէ
այլ բնութեան կողմէ անհատին մէջ գրուած
տրամադրութիւն մը, ուրեմն ինչո՞ւ մեր ա-
նէժքները չարին համար եւ օրհնութիւնները
հանգէպ բարիին ։

* * *

Կեանքին մէջ տաղտուկներ կան որոնք
ամբողջ գոյութեան մը նշանակութիւնը ու-

րանալ կուտան մեղ ։ Նորէն, կեանքին մէջ
վայելքներ կան որոնք ամէն գառնութիւն
մոռցնել կուտան ։ Վայելքի ու գառնութեան
հակասական տպաւորութիւններուն տակ մար-
դը լուսանկարչի քառաուային պիտի նմանէր
եթէ անցածին յիշողութիւնը չունենար ։ Յի-
շողութիւնը կենդանական բջիջին ամէնէն
խորհրդաւոր յատկութիւնն է ։ Յիշողութեան
կը պարտինք մարդկութեան ամէնէն նուիրա-
կան զգացումը, սէրը ։

* * *

Թշուառները զթած կ'ըլլան հանգէպ վի-
ճակակիցներու ։ արդեօք անո՞ր համար որ
թշուառները եղբայրներ կ'ըլլան, ինչպէս
կ'ըսեն, թէ թշուառութիւնը զթած կ'ընէ
մարդս ։ Երկու պարագաներն ալ, չեմ կարծիր
որ բուն պատճառը եղած ըլլան թշուառ-
ներուն, հանգէպ իրարու զթած, ըլլալուն ։
Թշուառներուն զէպ ի իրար ցոյց տուած
զթութիւնը որ քրիստոնէական կրօնքին մէջ
այրի կնոջ լուծալովը նուիրագործուած է,
ճիշդ մըն է միասին մաքառելու համար թշ-
ուառութեան դէմ ։

Ճէրէֆէյէ Շարֆէյէ հայատառ տաճ-
կաբարբառ օրաթերթին տնօրէնը Տիգ-
րան Էֆ. Ճիվէլէկեան, ներկայ ամսոյս
Տէն սկսած է Սոսհանդակ հայերէն ա-
մենօրեայ թերթի մը հրատարակու-
թեան ։

Յաջողութիւն կը մաղթենք մեր
յարգելի պաշտօնակցին ։



ԳԱՐԱՎԵՐՋԻԿ ՀԻՒԱՆԴՈՒԹՅՆՆԵՐԸ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մ Ի Ք Ա Յ Է Լ Շ Ա Մ Տ Ա Ն Ճ Ե Ա Ն



ԵՆՈՒՍՈՒՆԱԿԱՆ թուականի սկիզբներէն մտնաւանդ, բոլոր քննադատական եւ գրողատական տարրալուծող հեղինակութիւններու մէջ սկսած է անսկիզբ տրտունջ մը հանդէպ արդի գեղարուեստական եւ գրական արտադրութիւններու, որոնք իրբեւ թէ հիւանդ ժամանակի մը արդիւնքը եղած ըլլան, իրենց վրայ ցոլացնելով այդ ժամանակին բոլոր խօթութիւնները, եթէ նկատողութեան առնչք եւրոպայի մէջ այս մասին բոլոր գրողները պիտի հարկադրուինք եւրեակապի թէ այդ ընկերութիւնները վարակուած են բոլորովին քայքայող հիւանդութիւններով, զորք կենսականութեան խայծէ մը:

Մեր մէջ, ընդհանրապէս, ճշգրիտ գիտակցութիւն մը եւ ըմբռնում մը չի կայ եւրոպական կեանքի եւ այդ կեանքի երեւոյթներու մասին, եւ անոնց նկատմամբ մեր

դատողութիւններն ալ յաճախ գեղապաշտ յօդուածի մը հարեւանցի ընթերցանութենէն յառաջ եկած զուրկ են որ եւ է նշանակութիւն մը ունենալէ:

Եւնք մեր գրականութեամբ թէ եւ անգիտակից հետեւողներ եւրոպական գեղարուեստներուն, բայց միշտ թեթեւութեամբ անդամ ենք եւրոպայի մէջ յարուցուած այն բոլոր խնդիրներու վրայէն որոնք մտաւորական ամբողջ կեանք մը կ'որակեն ու լծակներն են գեղարուեստներու եւ գրականութեան: Այն հետեւողները, որոնք իրենց օրինակ (moëèle) ծառայող երեւոյթ մը կամ արտադրութիւն մը չեն ըմբռնած, կարող չեն իրենց յարմար, յաջող ընտրութիւն մը ընել այդ եւ ուրիշ օրինակի մը միջեւ եւ իրենց գործունէութիւնը կը մնայ անզոյն կապկութիւն մը:

Ներկայ յօդուածով պիտի փորձեմ ի վեր հանել մասնաւորաբար գրականութեան մէջ եղած զարաւելքիկ այն ձգտումները որոնք իրենց չափազանցութեան մէջ հիւանդու-

թիւները դարձած են : Յաճախ լսած կամ կարդացած ենք դրականութեան մէջ դարավերջիկ հիւանդութիւններու գոյութեան մասին եւ որպէս զի մեր այսօրուան գրեկը պարզ ըլլայ, նախ ճշգնեք թէ որո՞նք են զեղարուեստներու կամ գրականութեան մէջ եղած դարավերջիկ հիւանդութիւնները ու յետոյ ըսենք թէ արդար է զեղարուեստական կարգ մը ձգտումներ իբր դարավերջիկ հիւանդութիւններ նկատել, այսինքն որչիկ թէ այդ հիւանդութիւնները մասնաւորապէս մեր ժամանակէն յատուկ են : Երբորդ, բացատրել թէ որո՞նք են արդի գեղարուեստներու եւ գրականութեան յատկանշական յատկութիւնները որոնք իբր արդիւնք պէտք է նկատել դարավերջիկ հիւանդութիւններուն : Եւ եթէ դարավերջիկ հիւանդութիւնները պէտք է իբր հետեւանքը ենթադրել արդի գեղարուեստական ձգտումներուն, պէ՞տք է ընդունիլ որ այդ հիւանդութիւնները որ եւ է ազդեցութիւն մը կրնան ունենալ զեղարուեստական արտայայտութիւններու վրայ :

* * *

Նախ պէտք է որոշել թէ ի՞նչ կը հասկընանք դարավերջիկ հիւանդութիւնները ըսելով : Դարավերջիկ հիւանդութիւններու մասին խօսուած ատեն ամէն ոք միշտ ջղայնութեան հետ կը կապէ զայն, ու այս կապակցութիւնը ոչ թէ չհասկցողներու այլ նոյն իսկ իրազեկներու, գիտնականներու կողմէ ալ տեղի կ'ունենայ : Գերմանացի նշանաւոր ջլախտաբոյժ մը էրպ, կը յիշեմ որ 1893ին անտանբերութիւն մը կ'ընէր իրեն նիւթ առնելով « ներկայ ժամանակի ջլախտաւորներուն ստուարանալը » : Տարի մը վերջը ուրիշ գիտնական բժիշկ մըն ալ ջղայնութեան վրայ միեւնոյն կարծիքները կը յայտնէր : Վերջերս հրատարակուած պոօլիստ մըն ալ կը խօսի մեր դարու ջղայնութեան վրայ⁽¹⁾ : Ամբողջ գրականութիւն մը կայ այսօր ջղայնութեան մասին, զայն մեր գա-

րու հիւանդութիւն մը նկատող, Գիտնականներէ շատեր տարրալուծումներ կը ներկայացնեն ջղայնութեան ինչ ըլլալուն նկատմամբ եւ կ'առաջարկեն դարմաններ հետզհետէ տարածուող այդ ընկերային չարիքին առաջը առնելու համար :

* * *

Եթէ ուսումնասիրենք թէ ի՞նչ պէտք է հասկնալ ջղայնութիւն ըսելով, մեր ուսումնասիրութեաններուն իբր արդիւնք չենք կըրնար որոշ եղրակացութեան մը հասնիլ : Նոյն իսկ ջլախտաբոյժներ ջղայնութեան մասին իրենց ըմբռնումով իրարմէ կը տարբերին : Բրոֆ. Էրպ իր ատենաբանութեան մէջ, որ յետոյ հրատարակուած ալ է⁽¹⁾, կ'աշխատէր ջղայնութեան ճշգրիտ սահման մը տալ երբ կ'ըսէր թէ « շարժումներու մէջ եւ աշխատութեան ատեն անհանգստութիւն մը եւ աճապարանք մը, դիւրագրգռութիւն մը զգայարաններու կրած ապաւորութիւններէն, սարսափոտութիւն մը (Schreckhaftigkeit), չափազանց գրգռում եւ կրքոտութիւն մը, կեանքի պզտիկ անպատեհութիւններուն հանդէպ դիմադրելու անկարողութիւն մը, միշտ փոխող տրամադրութիւն մը, անհանդարտ քուն մը, իւրաքանչիւր լուրջ աշխատութենէ վերջ ինքզինքը պարտաւած դրալը՝ սրտի յուզումը եւ նման ջղային եւ հոգեկան վիճակներ կը կազմեն ջղայնութիւնը » : Զրգայնութեան մասին տրուած գիտական սահմանի մը մէջ սակայն, ինչպէս կ'երեւայ, որ եւ է հիւանդութիւն մը չէ յիշատակուած, այլ աւելի այն տեսակ վիճակներ տկարակուած որոնք առողջ վիճակէ մը հիւանդութեան անցնելու շրջանը կը կազմեն :

Ուրիշ գիտնական մը ջղայնութիւն ըսելով կը հասկընայ, բժշկական տեսակէտէն « ջղային դրութեան այն տեսակ ժառանգական արամագրութիւն մը, ջիզերու՝ իրենց գերը կատարած ատեն այն տեսակ հիւանդութիւն մը, որոնք՝ անհատը կեանքին վնասակար

(1) Die Nervosität unseres Zeitalters. von Freund.

(1) Ueber die wachsende Nervosität unserer Zeit, von Erb. Heidelberg, 1893.

պայմաններուն դէմ դնելու անկարող կ'ընեն» Այս բոլորէն վերջը սակայն , նորէն միեւնոյն գիտնականներն են , ջլախտաբոյժներ , որոնք Շոքէնհաուէրի , Վահլենբերի , Պէօքլինի եւ Թալսթոյի մասին խօսած ատեն կ'ըսեն թէ « անպահովապէս ինչ որ այս մարդիկը իրենց անմահ գործունէութեամբ , իմաստասիրութեան եւ երաժշտութեան , բանաստեղծութեան եւ նկարչութեան մէջ արտաբերած են , այս ամէնքը ուրիշ բան չեն բայց , եթէ ջղայնութիւն մը , որ թերեւս իրենց կատարածին մէջ հիւանդութեան մօն եղող հակումի մը արդիւնքն է :

Եթէ աւելի աստջ երթանք հասկնալու համար ջլախտաբոյժներուն վերջին կարծիքը ջղայնութեան մասին , պիտի տեսնենք թէ կան այնպիսի գիտնականներ որոնք գիտական ճշգրտութիւն մը պահած ըլլալու համար կ'ըսեն թէ ջղայնութիւնը (nervosisme) եւ ջլախտաւորութիւնը (nevasthenie) նման վիճակներ են : Իսկ երբ ջղայնութեան գիտական ըմբռնումէն առաջնորդուելով ուզենք անոր ընկերական կողմը քննել , չեմ կարծեր որ շատ հակառակողներ պիտի ըլլան եթէ ըսուի որ ջղայնութիւնը ներկայ մարդկութեան մէջ զարհուրելի կերպով տարածուած ցաւ մըն է , եւ նորոյթի բացառութիւնը գործածածելու համար դարաւերջիկ հիւանդութիւնն է . Ու այս դարավերջիկ հիւանդութեան քիչ թէ շատ ենթակուած է այսօր իւրաքանչիւր անհատ :

Թէ գիտնականները , թէ գեղարուեստագէտները համաձայն են ընդհանրապէս սակաւին վրայ թէ ջղայնութիւնը ամէնէն աւելի շեշտուած գիծն է դարավերջիկ մարդկութեան կեանքի բոլոր երեւոյթներուն մէջ , կան քննադատներ որոնք ընդհանուր ջղայնութեան երեւոյթը գլխաւորաբար իր ֆիզիքական կողմէն առնելով , անոր հետզհետէ աճելուն վրայ կը հիմնեն իրենց տպաստեռութիւնը (philosophie de dégénération) տեսութիւնները :

Իսկ մենք ընդունելով որ ջղայնութիւնը ամէնէն աւելի մե'ր ժամանակի հիւանդութիւնն է ըսենք թէ ի՞նչպէս մեր կեանքին այդ կողմը գեղարուեստներուն միջոցաւ կ'արտայայտուի . բոլոր գեղարուեստներուն մէջ

Թատրերգական արուեստը ամէնէն աւելի մեր ամէն օրուան կեանքով թաթաւուած , կըրնայ յստակ կերպով բնութիւն վրայէն պատկերացնել բոլոր վայրկեանները որոնք Թատրոնէն դուրս իրական կեանքը կը չինեն եւ որոնք Թատրոնին մէջ մեզ կը ներկայանան , առիթը առնելով անգրագիտալու իրականութեան մէջ մեր շատ մը կատարածներուն վրայ : Եթէ դարավերջիկ թատրերգութիւնները ռոմանթիք ու դասական ժամանակներու թատրերգութիւններուն հետ բազմապէս կը տեսնենք որ մեր դարավերջը զմեզ որքա՞ն հատուկ կերպով կ'անջատէ մեր նախորդներէն : Երբեմն Թատրերգութիւնները ամբողջ չարժուած ու գործողութիւն էին , մտքի եւ հոգեւոյ վիճակները երկրորդաբար մասը կը կազմէին թատրերգութեան մը : Շարժումներով ու գործողութիւններով այնքան քիչ դարավերջիկ թատրերգութիւնները հոգիի ալքերը պատկերացնող տեսարաններով , յատկանշական բան մը ունին մեր ժամանակին համար : Եթէ դարավերջիկ թատրերգութիւններու անձերուն մօտենալ ուզենք , պիտի տեսնենք որ անոնք ընդհանրապէս մեր վերը նկարագրած բոլոր յատկութիւններով ջղայնութեան ենթակայ անհատներ են : Եւ եթէ բոլոր ադրավերջիկ թատրերգութիւններու մէջ մեզ ներկայացուած անձերը ջղային անհատներ են , միթէ ատենք թատերագրին « և՛ » ը միայն կ'արտացոլեն թէ՛ առնուած են դարավերջիկ մարդկային ընկերութեան մէջ վիտացող ջղայիններու դանակէն : Սթրինպէրկի , Իբսէնի , Հաուսբամանի եւ դեռ շատերու թատրերգութիւնները լեցուն են ջղայիններով որոնք հետու մտածումով կերտուած անհատներ ըլլալէ , ուղղակի մարդկութեան արդի բարքերուն միտ եւ արիւն անձերը կը ներկայացնեն . Բազմապաշտան կեանք մը եւ քաղաքակրթութեան հետ վազելու ճիգ , պէտք է ընդունիլ որ եղած է գլխաւոր պատճառը ջիզերու նրբացման , ու նրբազգած ջիզերը մարդուն մէջ յստաջ բերած են այն ահաւակ հոգեկան վիճակներ , զորս ջղային , դարավերջիկ անուններով կ'որակենք եւ որոնք չենք գիտեր թէ մեզ զարգացումի՞ մը թէ տպաստեռութիւն (dégénération) մը կ'առաջնորդեն , եւ գեղարուեստներն ալ ի՞նչպէս տա-

բաժնեները կ'ըլնան ջղախուժենէ յառաջ եկած ջրախառնական եւ խոցերածէզ (histerique) հոգեկան արտաճարութիւններու : Գրականութեան մէջ խոցերածէզ արտաճարութեան մը օրինակը կը համարուի այսօր Կիւսթավ Ֆլօպէտի Madame Bovary ն որ զարաւերջիկ հիւանդի մը տիպարը կը ներկայացնէ : Ինչպէս « Հէտտա Կապլէս » ր որ Վոյնի գոտակարգէն կը համարուի շատերու կողմէ :

Միւս կողմէ թէեւ խոցերածէզութիւնը իրական սէսին յատուկ հիւանդութիւն մը չէ, բայց այսօր ամէնէն աւելի կ'ընենք ենթակայ են այդ հիւանդութեան : « Խոցերածէզութիւնը կ'ընէ հոգեկան այն կայութիւնն է, որով անիկայ մտածման, զգայման, կամքի բոլոր բուերուն մէջ կը տարբերի այր մարդէն : Իրեն մէջ հոգեւոր զգացողական մասը աւելի զարգացած ըլլալով, պաշարիւնով կ'առջի իմացականութիւնը իր գործունէութեան մէջ հեռազնեւէ կը սահմանափակուի, որուն ամբիջական հետեւանքները կ'ըլնան զգացուններուն գերակշռութիւն մաքին վրայ, ու յետոյ կ'ամբի ուժի տկարանալը : »


Կնոջական հոգեւոր այս տեսակ կացութիւն մը նշմարելի է այսօր գրական կարգ մը արտաճարութիւններու մէջ : Կ'ընք միշտ գեղարուեստներու հոգին եւ սատարողը եւ զած է : Կ'ընք հոգին իր բոլոր ձգտումներովը եւ վիճակներովը ամէն գրականութիւններու մէջ, որոնք արուեստի նրբութիւններուն տիրացած են, միշտ վերարտադրուած է արուեստագէտներու ձեռքով, ու այս վերարտադրումին տակն գրականութիւնը ինչպէս բոլոր գեղարուեստները անզգայտարար իւրացուցած են իրենց ժամանակի կ'ընէ հոգեկան վիճակները : Մեր դարու գրականութիւնն ալ զերծ չէ եղած կ'ընէ եկած սպաւորութիւններէ : Ընդհակառակը ամէնէն աւելի ազդուած է անիկ : Ու ակնհայտ է նաեւ այսօր գեղարուեստներու միջոցաւ ստեղծուած այն աւսակ տիպարներու, որոնք ջրախառններու բոլոր յատկութիւնները իրենց վրայ կը կրեն : Երբոր յատկանշական կողմ մը զարաւերջիկ գրականութեան մէջ : Շարժումը, գործողութիւնը երթալով պակսելու վրայ է անկից, ու անոր աւել հոգեւոր զանազան արտաճարութիւնները եւ վիճակները պատկերացնող տեսարանները կը բռնեն :

Ինչ որ բնական վրայէն մեզ կը ներկայանայ, զոյութիւն ունի նաեւ կեանքին մէջ : Կեանքի մէջ ալ զգացողական կեանքը գերակշռութիւն մը սկսած է ունենալ ընկերութիւններու գործունէայ, իմացական կեանքին վրայ : Շարժողականէն դէպ ի զգացողական կեանքի մը երթալը, վերը արդէն ըսինք թէ ջրախառններու անհատներու յատուկ է ու այսօր ալ սկսած է միեւնոյն փոխանձական յատկանքները տեսնուիլ գրական ստեղծութեան մէջ :

Գրականութեան մէջ երեւցած այս յատկանքները ինչ տեսակ կապակցութիւն մը ունին մեր գարաւերջիկ կեանքին տիրող ջղախուժեան յատկանքներուն հետ : Այս կէտը չափազնիւական ճշգրտութեամբ պարզելը թերեւ կարելի չըլլայ, բայց պէտք է ընդունիլ որ եթէ բոլոր գեղարուեստները ուրիշ բան չեն այլ արտաքին աշխարհի ազդուութիւններուն տակ անհատին մէջ կազմուած ներքին աշխարհը արտայայտող միջոցները, ուրեմն մեր ծամանակի գեղարուեստներն ալ, մասնաւորաբար գրականութիւնը զերծ չեն եղած այդ ազդեցութիւններէն, եւ ջղախուժեան ընկերական ինչպէս արուեստագիտական հիւանդութիւն մը դարձած է զարաւերջիկ մարդկութեան մէջ :

Ամէնէն աւելի կը համոզուինք երբ մանաւոր իրազեկ զինականներու տեղեկագիրները կարդանք, որոնք մեզ կ'ընեն թէ ջղախին հիւանդութիւնները այժմ շատ աւելի տարածուած են քան թէ որ եւ է հիւանդութենէ վարակուածները : Զղայնութեան աւելնալը գեղարուեստներուն մէջ, նմանապէս զգալի է այսօր :

Այս յօդուածով ուղեցի ամէնէն աւելի ի վեր հանել գեղարուեստներու այն մասը որ կեանքէն առնուած ջղախին հոգեկան արտաճարութիւններու արտայայտութիւնն է : Յաջորդ յօդուածով մը պիտի փորձեմ ցոյց տալ թէ միտքը ինչ տեսակ ուղղութիւն մը ստացած է գեղարուեստներու մէջ, հանդէպ ջղախուժեան բոլոր ազդեցութիւններուն եւ անոնք մեր կեանքին մէջ յառաջ բերած վիճակներուն :



ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՃՈՅՔԻ ԶԳԱՑՈՒՄԸ



ՐԱԽԱՆԵՐԸ երկու տեսակ զգացումներ ունին, մին հաճոյքի և միւսը տհաճութեան զգացումը: Երախային նոր ծնած ատենները տհաճութեան զգացումը կապուած է անօթութեան, իսկ հաճոյքի զգացումը կշտանալուն հետ: Իսկ յօգնած ըլլալու զգացումը նոր ծնած տղաքներու քով գրեթէ գոյութիւն չունի:

Այսօր պիտի խօսինք գլխաւորաբար հաճոյքի զարգացման մասին, անոր հոգեբանական պատճառները բացատրելով, և միեւնոյն ատեն ի վեր հանելով այն ահագին նշանակութիւնը որ անիկա ունի բովանդակ կենդանական աշխարհին կեանքին կապուած երեւոյթներուն հետ:

Նոր ծնած տղու մը կեանքին առաջին երեք ամիսներուն մէջ հաճոյքի զգացումը միակողմանի է բոլորովին: Բացի անօթութեան յագեցուելուն եւ անոր հետ անմիջական կերպով կապուած ծծելու վայելքին կաթին անուշ համը յառաջ կը բերէ հաճոյքի

զգացում մը: Հաճոյքի ուրիշ զգացում մըն ալ կայ որ նորածինը կ'ունենայ իր կեանքի առաջին ամսուան միջոցին երբ զինքը ծնած օրէն տաք ջուրի մէջ կը լողանանանք: Նուազներոյժ բայց տեւական գոհունակութիւն մը կը պատճառեն լոյսի ոչ խիստ ճառագայթները և քիչ մը ատեն վերջն ալ երբ իր աչքին առջեւ երեբացող առարկաներ դուրսն: Թէ լոյսի ճառագայթի եւ թէ երեբացող առարկայի մը ի տես երախային մէջ յառաջ եկած հաճոյքի զգացումը սակայն կարելի չէ բաղդատել այն ուրախութեան երբ մանկան ոտքերը և ձեռքերը ազատ կը թողուին: Մանաւանդ մեր մէջ, նորածինները ուժով մը խել մը լաթերու մէջ: Էր փաթկենք, որով երբ մանուկները այդ կապերէն կ'ազատենք կը սկսին եռանդուն շարժումներ ընել անոնք: Դիւեցիկները նաև հաճոյք կը զգան երբ զիրենք կը չորցնենք կամ կը մաքրենք:

Երաժշտական ձայներն ալ երկու ամսուան մանուկի մը հաճոյքի զգացումներ կ'ազգեն: Երգելու, դաշնակահարութեան և երաժշտական ամէն ձայներու հնչումը տհաճութիւն զգացող մանուկները կը գոհացնեն և ուրախու-

Թեան խանդոտ շարժումներ ընել կուտան
այնպիսիներուն որոնք հանդիստ պառ-
կած են։ Եթէ մանկան մօտեցած դէմք
մը շարժի, խօսի, երգէ, խնդայ, սովո-
րաբար երեւցած միւս առարկաներէն բո-
լորովին տարբեր ըլլալով, մանկան աւ-
շադրութիւնը իր վրայ կը դարձնէ,
անոր ուրախութիւն պատճառելով։
Այսու հանդերձ դիեցիկ մը իր երեք
ամիսները բոլորելէ առաջ զժուարաւ
կը ճանչնայ իր մայրը։

Դիեցիկները երբ իրենց չորրորդ
ամսուն մէջ կը մտնեն կամաց կամաց
անոնց մէջ ծագում կ'առնէ բոլոր տե-
սածնին բռներու հաճոյքը, հինգերորդ
ամսուն մէջ աւելի կը զարգանայ եւ
յստակօրէն կ'երեւայ հաճոյքի այդ
զգացումը անոր վեց ամսուան եղած
ատենը։ Մանուկներու վեց ամսուան
եղած ատենը զիրենք դուրս հանել-
նուս չափազանց հաճոյք կը զգան.
այս հաճոյքը պէտք է վերագրել ա-
ւելի, տեղի ունեցած շրջապատի փոփո-
խութեան, աւելի յուսաւոր ըլլալուն եւ
աւելի թարմ օդին։ Եթէ ամսուան դի-
եցիկի մը երբ հայելին մէջէն իր դէմքը
ցոյց կը տրուէր յստակ կ'երպով կ'երեւար
այն հաճոյքը զոր ան կը զգար։ Կենդա-
նինքը եւ ժամացոյցը եթէ ամսուանէն
աւելի մեծերուն միայն կարող են հա-
ճոյք պատճառել։

Հաճոյքի զգացմաննոր տեսակ մըն
է որուն մէջ իմացականութեան ալ
մաս մը կայ, երբ մանուկը կը սկսի
ինք իր գլխուն ձեռքը տրուած բանի
մը մանաւանդ ձեռք փոխել, ասիկա
կամաց կամաց զինքը իր ոյժի գիտակ-
ցութեան կ'առաջնորդէ։ Թուղթի կամ
լրագրի կտորներուն պատռելը կամ ճը-
մըրթիկը 6 ամսականէն մինչ երեք
տարեկան տղայոց մեծ հաճոյք կը պատ-
ճառէ։ Նմանապէս մօրուքէն, պէսէն
քաշելը կ'ուրախացնէ մանուկները, եւ

Թերորդ ամիսէն վերջ աւելի իմացա-
կանութեամբ խառնուած զգացումներն
են, ինչպէս առարկաներ ամանի մը մէջ
լեցնել պարպելը, մկրատով կտրելը,
գիրքեր թղթատելը, պատկեր նայելը
որոնք հաճոյալի են մանուկներուն։ Այս
հաճոյքներէն վերջն ալ կայ երրորդ մը
ուր մանկան երեւակայութիւնը կը դոր-
ծէ, ինչպէս փայտի կտորներէ շէնքեր
շինել, հայրիկ օյիւն ի մայրիկ օյիւն ի եւն.
խաղալ որոնք անհունա կը զուարճա-
ցնեն մանուկները։

Սակայն երբ նորածիններու ընդ-
հանուր կացութիւնը աչքի առջեւ ու-
նենանք կը տեսնենք որ անոնց հա-
ճոյքի զգացումը հետեւանքն է տհա-
ճութեան զգացումի մը ջնջման, եւ ոչ
թէ ուղղակի հաճոյք պատճառող վի-
ճակի մը արդիւնք։ Անօթութիւնը,
ծարաւը, թացութիւնը, ցրտութիւնը,
լաթերու մէջ փաթթուած ըլլալը եւն.
երբ մէջտեղէն վերցուին, ատոնցմէ կը
ծագին հաճոյքի զգացումները։

Մարդկային կեանքին առաջին շը-
շանը, բովանդակ դոյութեան ամէնէն
անհաճոյ մասն է, որովհետեւ վայելք-
ներու թիւը ինչպէս նաեւ վայելելու
կարողութիւնը աւելի նուաղ է քան թէ
տհաճութեան զգացումներու թիւը,
մինչեւ որ քունը դայ ամէն ինչ ընդ-
միջելու։

Մանկան մը նոր ծնած ատեն, հա-
ճոյքի զարգացման արտայայտութիւնը
միայն մէկ եղանակով կը կատարուի։

Ծնունդի առջի օրերուն մէջ, հա-
ճոյքի զգացում մը արտայայտելու ա-
տեն ձայնը բոլորովին տարբեր է, քան
եթէ անիկա անօթի եղած ըլլայ։ Բարձրաւ
ձայն ճիչերը ուրախութեան ամէնէն ա-
պահով նշանը պէտք է նկատուի։

Ընդհանրապէս դիտուած է որ երբ
դիեցիկները ոտքերնին ձեռքերնին կը
շարժեն, ատիկայ ուրախութեան նշան

է: Ոտքերուն եւ թեւերուն երկնցները, քաշելը աւելի իմաստ մը կը ստանան երբ դիեցիկը իր տարիքին մէջ կը յառաջանայ: Ինը ամսուան դիեցիկ մը, հաճոյքի զգացում մը արտայայտելու համար երբ ձեռքերը եւ ոտքերը կը շարժէ նաեւ հեկեկում մըն ալ կ'արձակէ: Երկու ոտքերովը պառկած տեղը գետնին զարնելը ամէնէն աւելի այն ատենները տեղի կ'ունենայ երբ դիեցիկը կ'ազատենք իր կապերէն եւ զինքը ազատ, թեթեւ կերպով լուսաւորուած, չոր անկողնին մէջ կը պառկեցնենք, լաւ մը զինքը կշտացուցած ըլլալէ վերջը: Իր շարժումները բացօթյոյ կերպով իր դահունակութեան արտայայտութիւնն են:

Նաեւ տեսնուած է որ 6 ամսուան մանուկները երբ իրենց ոտքերը ձեռքերը կը շարժեն, այս առթիւ իրենց հաճոյքի արտայայտութեան միացած է նաեւ ծիծաղը: Մանուկներու բարձրաձայն խնդալը ամէն անգամ իբր ուրախութեան նշան պէտք է ընդունիլ, որովհետեւ վեց ամիսէն աւելի մեծ մանուկներու վրայ դիտուած է որ անոնք միշտ կը խնդան երբ մենք իրենց երեսը նայելով խնդանք: Ասիկա պարզապէս նմանելու հակումն է որ կայ մանկան մէջ: Հաճոյալի խաղի մը կըրկնուելուն գոհունակութենէն խնդալը, դժուար է նոյն իսկ վարժ եղողներու համար զանազանել միւսներէն, միայն խնդալու պատճառները կրնան մեզ ցուցնել մանուկներու խնդալուն մէջ ամբողջութեամբ տարբեր իմաստները: Սակայն երեք ամսական անօթի դիեցիկի մը իր անունդին երեսը տեսնելուն, դէմքին վրայ երեւցած ծիծաղը զիւրաւ կարելի է զանազանել կուշա մանկան մը ի տես սանտուին ունեցած ծիծաղէն: Այս երկու պարագաներուն ալ ծիծաղը հաճոյքի մը արտայայտութիւնն է, սակայն առաջին պարագային մասնա-

ւոր պատճառի մը եւ երկրորդին՝ ընդհանուր:

Մկաններու գործունէութիւններուն իրարու հետ ունեցած այս յարաբերութիւնները, որոնց հիմը կը կազմէ ջղալին դրութիւնը, հանելուկ մըն են դիտութեան համար: Պզտիկ տղաքներու եւ կենդանիի ձագերու շարժելու համար ունեցած հաճոյքը, իբր ուրախութեան արտայայտութիւն, եւ պառկելով լացէն խնդալու անցներու հիստերիք տատմը, որ երեք տարեկան տղաքներու քով մանաւանդ այնքան յաճախ կը պատահի, այս ամէնքը կարող չեն մկաններու եւ ջղային դրութեան միջեւ եղած յարաբերութիւններու բնախօսական բացատրութիւնները գիւրացնելու: Բոլոր մանուկներու համար, թեքեւ բնախօսօրէն պէտք է շարժում մը տեղի ունենայ, երբ անոնք արտաքին աշխարհէն հաճոյական տպաւորութիւն մը կը ստանան:

Այս բոլոր դիտողութիւններէն կ'երեւայ թէ շուրջի զուարթութիւնը որքան թարմացնող կերպով կ'ազդէ մանկան ջղային դրութեան վրայ: Ուրեմն մանուկներու մտաւոր զարգացման համար անհրաժեշտ է որպէս զի իրենց շուրջը եղող ամէն ինչ զուարթ ըլլայ: Մանուկներու վրայ զուարթ տպաւորութիւն մը կ'ընէ եթէ զիրենք բացօթեայ տեղեր արեւին առկ եւ իրենց հասակակիցներու շրջանակին մէջ տանինք, փոխանակ արուեստական կերպով լուսաւորուած, տաքցուցած սենեակներու մէջ փակելու, նոյն իսկ եթէ այդ սենեակներուն մէջ ամէն տեսակ խաղալիքներ ըլլան: Շատ մը մայրերու վախը թէ իրենց քանի մը շաբաթուան զուակը բաց օդին հանելը անխոհմտութիւն է, բոլորովին անտեղի է, եւ նոյն իսկ վնասակար մանուկներու ապագային համար: Շատ մը 8—9 տարեկան տղաքներ որոնք տկար

են, իրենց այդ տկարութիւնը կը պարտին զլիսաւորարար սենեակի մէջ փակուած կեանքի մը: Մեր մէջ աւանդական կարգ մը սխալ ըմբռնումներով բնաւ կարեւորութիւն չի տրուիր մանուկները բացօդեայ տեղեր տանելու և արեւի ճառագայթներուն կենդանացնող ջերմութեան տակ բռնելու մասին: Մեր մանուկներուն տեսողութեան հորիզոնը սենեակին չորս պատերէն անդին չանցնիր ընդհանրապէս: Արդեօք ա՞ն է պատճառը որ մեր 8-9 տարեկան տղաքները ընդհանրապէս անարիւն են, և յառաջիկային ալ մեղամաղճոտ հակումներով պատանիներ կը դառնան:

Մեր բարքերուն մէջ արդէն բնաւ մտած չէ առողջապահական տեսակէտէն մաքուր օդին՝ ամբողջ մարմնին վրայ ըրած բարեբար ազդեցութիւնը գնահատելու սովորութիւնը, և միշտ կարծած ենք մեր հոգատարական պարտաւորութիւնները կատարած ըլլալ, մեր տղաքները առնելու մէջ բանտարկելով: Պէտք է մենք ալ կամաց կամաց սովորինք բնութեան մեզ ներկայացուցած բոլոր վայելքներէն ու առաւելութիւններէն օգտուիլ: Եթէ մինչեւ այսօր կարող չենք եղած այդ բանը ընել, պատճառը մեր կրթութիւնն է: Թէ ընտանեկան եւ թէ դպրոցական կրթութիւնը այն տեսակ կերպով մը կը տրուի տղաքներուն որ, անոնք ամէն

կերպով կը հեռանան իրական աշխարհին իրենց ներկայացուցած հաճոյքները վայելելէ ու բոլորովին վերացական էակներ կը դառնան թէ իրենց հաճոյքներով և թէ իրականութեան մասին իրենց ըմբռնումներով:


Իրականութեան մասին սխալ ըմբռնում մըն է եթէ մեր մայրերը այնքան կը զգուշանան իրենց տղաքը միշտ մաքուր բացօդեայ տեղեր հանելէ: Որքան կայտառ կ'ըլլան այն տղաքը որոնք մանաւանդ ամառները բաց թեւերով եւ բումբերով զգեստներ կը կրեն միշտ, եւ դուրսի մաքուր օդը և արեւին կենսատու ճառագայթները ազդելով անոնց մորթին ու արեան վրայ, զիրենք աւելի աշխոյժ աւելի թաքմ կ'ընեն, նոյն իսկ հեռացնելով անոնցմէ ջղայնոտի շատ մը ժառանգուած տրամադրութիւններ որոնք արագապէս պիտի դարձանային եթէ փակուած սենեակներու մէջ պահէինք զիրենք: Մաքուր օդը կը կանոնաւորէ մանաւանդ մանուկներու արեան շրջանը, շնչառութիւնը կը դիւրացնէ, թարմացնող կերպով կ'ազդէ ջիւղերուն վրայ ու ասով առիթը եւ ճաշակը կու տայ անոնց բնական առողջ հաճոյքներ զգալու, փոխան այն տեսակ հաճոյքներու որոնք լալուակութեան, մօր հետ ծեծկուռքի և նման օրինակ պարագաներու մէջ կը կայանան:





Ն Ա Յ Ո Ւ Ա Ս Զ Ը

Կ Ա Ր Օ (Մարկաբա)



ՂՋԸԿԱՆ մը ծաղկատի
Խոր նայումէր բոցավառ,
Ունի ցոլէր հրբառի՝
Խորհրդաւոր, անբաւար :

Ու երէ մեր ինձ յառին
Ջոյգ մը յանդուզն եփեցաւ
Կրգգամ անոնց սարսուռին՝
Տուրտ սողսկսւմն յամբահա :

Ու վակժուծի չեմ կրնար
Այդ սեւ, փայլունն անձկագին՝
Ուր կը յուզուի տենդահար՝
Կենսաբարբախ իր հոգին :

Քանզի անոնց այդ յամառ
Սեւեռումներն երագուն՝
Կրգգամ քէ միշտ ինձ համար
Ունին խրոպէ մը անհուն :

Ու վրդալած, խոյս կուտամ
Այդ անհրէք նայումէն,
Ուր անհանգիստ եւ տարտամ
Ցանկութիւններ կ'սկնարկեն :



ԽԶՈՒՍԺ ԼԱՐԵՐ ՈՒ ԹՐԹՈՒՈՒՆ ԹԵԼԵՐ

Կ Ա Ր Օ (Մակարա)

Շ Ո Ւ Ն Ն Ն Ն Ն Ն Ն



ՈՒՇԱՆԻՆ՝ ներմակ լանջէն՝ խաւափուկ
Անդուլ կը մըխան բուրմունքներ փափուկ ,
ձերմա՛կ, սուրբի պէս մաւութ բերքերէն՝
Իր շունչն՝ իր հոգին են որ կը բուրեն :

Շուշանին կեանքն՝ բերքաւոր մ'է սիրուն ,
Որ կը բըրբըրուայ շուրջն իր բերքերուն ,
Այդ բերքաւորին մէջ՝ իր ներմակ հոգին
Կ'սպառնի յետոյ բուրելով ուժգին :

Աղջկան մը սիրտը՝ շուշան մ'է ներմակ ,
Յոյզով , խռովով բարախաւն համակ ,
Սէրն՝ այդ շուշանի բուրմունքն է անգայտ ,
Իր ներմակ հոգւոյն գալարն հեշտացայտ :

Աղջկան կեանքն երգ մըն է խաղաղ ,
Ներդաշնակ նիջ մը՝ հրեշտակի մատաղ ,
Լանջէր դուրս տալով այդ նիջը մաշող ,
Կրօնական յետոյ գերբ նրառկում շող :

3 Գունիս .

Մ Ա Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն Ն



ՄԷՆ տարի, ապրիլի մէջ , շատ անգամ ,
Առանձնակի , երազներով սողորուն ,
Բարեւելով դարձ , ծաղիկ ու գարուն ,
Ես մեղիօրէն , հայամարտ ման կոպտմ :

Ու բաւուա՛րի մը շաւին տակ մըրբնշաղ՝
Մանիշակի կը կապեմ փունջ մը գողարիկ ,
Որուն կապոյտ աչկերուն մէջ մինիներկ՝
Կը պրկւորան արշալոյսի շողն ու շաղ :

Մանիշակին՝ ցրեցող ու նուրբ է հոգին .
Ամէն տարի՝ երբ հովերուն հետ գարնան ,
Ծիծեռնակն ու բիրեռները կը դառնան ,
Անոր բոյրը ես կը փնտռեմ կարողին :

Ու թէ մի օր տարարդնի փունջն իսկ , աւա՛ղ ,
Քոյրէն՝ հոգւոյս մէջ կը մընայ բան մը դեռ ,
— Գուցէ անոր վերջին հիւլէն կիսամեռ ,
Անջի սիրոյս յիշատակին պէս չըմբող :

4 Մարտ .

Վ Ե Ր Զ Ն Ն Պ Ա Տ Բ Ա Ն Բ



ԻԱ՛Ղ. գիտեմ թէ յոյսերը ցուրտ պատարանք են .
Պիտի մեռնիմ օր մը անդարձ , անվերբնձիւղ,
Հոգւոս մէջ լի սեւ կտակածներ, սարսուռ, երկիւղ,
Քաճկուէլով անտարբարոյժ անա՛ւջ ԵՍ Է՛ն :

Քայնայումին հետ ուղեղիս անուժ , անգէն ,
— Իմ ինքնուրեանս աչք մագական մանրիկ զամբիւղ, —
Պիտի հալի , գիտեմ, հոգիս , մարմինս՝ — իր հիւղ, —
Գերեզմանին ցուրտ կազերը պիտի լուծեն :

Այս անողոք համոզմանց բով արդեօք ինչո՞ւ
Դեռ պատարանք մը ունիմ խօ՛ւ , սին եւ օղակու ,
Ջի ներքնապէս ես կը կարծեմ թէ հողին տակ ,

Պիտի բզգամ՝ անձուկ մ' ուժգին եւ իր նընշում,
Ու մահուան մէջ՝ տառապանքի լուծ մ' անդադրում,
Ինքնուրեքնէս դեռ, կայժ մը վառ , նշոյլ մը տամ :

31 Մարտ .

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

ԱՅԻՈՆ ՍՅՂԱՍՏԵԱՆ

(ՍԻՒՆԻՔ)

Է.



ՕՏԱՅԻ խորձր ծովափին ,
ուր ցամաքը սեպ վար
կ'իջնէ ջրերուն զիրկը ,
եզերքէն քալլ մի միայն
հետեւ , սրճարանի աթոռներէն մէկուն
վրայ նստած էր Հրանտ անհանգիստ
թեւը յենած քովի սեղանին , բռնած գաւա-
ղանին կոթը շրթունքներուն , ու ոտքը նե-
սած ոտքին վրայ , որը անհամբեր կ'երեր-
ցընէր :

Մինէն առտուն երկտող մըն էր ստա-
ցեր , որ հօս անց ժամին իրար հանդիպելու
ժամտղիր էր-եղած : Ու հիմա անոր կ'ըսպա-
սէր :

Կ'ըսպատէր ու կ'ըզգար , որ այս իրիկուն
վճական բան մը պատահելու էր արդէն :
Վերջին երկու օրը , զրեթէ ամէն ժամ յու-
սացած էր Մինէի դարձին . չափ աղէկ կը
հասկնար , որ աղջիկը իր վերջին խօսքը դեռ
չէր ըսած :

Ետեւը , գետինը ցանուած խիճերուն
վրայ լսուող ամէն ոտնաձայն ազուն զուռը
եւ նայելու կ'ստիպէր : Երբ այդպէս ան-
գամ մըն ալ ետին դարձաւ , զգաց յանկարծ ,
սիրտը բոլոր ուժովը սեղմուեցաւ :

Մինէն գնա հետուն սեղաններուն շուրջը
հայեացք մը նետելով նշմարած էր երիտա-
սարդը , ու աթոռներուն մէջէն զէպի ան
կ'ըշտապէր :

Մութ-կանանչ ու բժաւոր շրջազգեստ
մը հագած էր , մօտաւորապէս նոյն գոյնի

փոքրիկ հովանոցը անութին տակ . ու զուռ-
խըն ալ՝ ճերմակ պարէտ մը զանգուրներուն
վրայ ձմրուտած :

Սովորական ժպիտը շրթունքին՝ մօտ ե-
կաւ . միայն դէմքը քիչ մը տփուկանաւ թուե-
ցաւ ազուն :

Հրանտ առանց տեղէն ելնելու՝ ձեռքը
մեկնեց ընտանեքար :

— Տէս , այսօր ալ դո՛ւն ուշացար : Նստէ՛ :

Ու դէմի աթոռը մատնանիչ ըրաւ :

— Չէ՛ . աւելի աղէկ է ելիր երթանք
շրջելու . պատասխանեց Մինէ՝ մօտակայ սե-
ղանին շուրջը շարուած խումբին վրայ դժգոհ
ակնարկ մը ձգելով :

Տղան առանց այլեւայլութեան կանչեց
մանչը , վճարեց . ու աթոռներուն խօսքը
մէջէն՝ դուրս եկան միասին :

— Ի՞նչ էիր թաղուեր նորէն մօտաւո-
նելուդ մէջ . խօսք առաւ Մինէ : Երեւի նո-
րէն մեծ ուղեղին թելերը կամ . . .

— Ոչ . այս անգամ բանաստեղծներուն ա-
ւելի սիրեկան օրկանի մը թելերուն վրայ կը
մօտաճէի :

— Վայ , այսինքն :

— Այսինքն սրտի մը , այն ալ որո՛շ սրտի
մը , անպէտք , աւելորդ սրտի մը . քնն սըր-
տիդ :

Մինէ քմծիծաղ տաւ .

— Այդ ի՞նչ քնքուշ անուններ ունիս ե-
ղեր քու ուղեղիդ թելերուն մէջ իմ սրտիս
թելերուն համար : Եւ ի՞նչ կը մօտաճէիր ,
տեսնենք , այդ անպէտք սրտի մասին :

— Կը մօտաճէի որ . . . Ի զուր անգը բնու-
թիւնը այդպէս սիրուն պատեանի մէջ է զրեւ
այդ առտիճանի անշնորհք սիրտ մը :

Ու ձեռքի հարեւանցի շարժումով մը
աղջկան լանջը մատնանիչ ըրաւ քովընտի :

— Գուցէ իրաւունք ունիս . բնութիւնը
այդ կարգի սխալներ երբեմն կը դործէ : Ա՛յ ,
օրինակ , քու այդ ընդարձակ գունդիդ տակ
միթէ աւելի օգտակար ուղեղ մը՝ չէ՞ր կրնար
զետեղեր :

Հրանտ խնդաց :

— Ոչինչ : այսօրուան մեր փոխադարձ
հաճոյախօսութիւնները պէտք եղածէն աւելի
շողոքորթիչ են :

— Կարելի է քու ըրածդ հաճոյախօսու-

թիւն էր, չգիտեմ . բայց գոնէ ես լուրջ կը խօսիմ : Քանի ստակ արժէ այդ քու զարգացած գլուխդ, երբ ատկէ խեղ մը, ուրախութիւն մը չի կայ ո՛չ քուկիներուդ ո՛չ քեզի սիրողներուն եւ ո՛չ ալ քու ժողովուրդիդ :

Ձայուած ժպիտով մը ու կրծկած թարթիչներով տղան շէշտ անոր կը նայէր, եւ աղջիկը կարծես աւելի գոգոռեցաւ .

— Ի՞նչ քիթդ-բերանդ կը ծըռմբես . սո՛ւտ է րոսծս : Առանց տտոր ալ կարծես շատ մարդիկ կան մեր հասարակութեան մէջ բանի պէտք եկող . եւ ահա՛ քեզի պէս քիչ շատ պատրաստած ուժերն ալ կը ձգեն կ'երթան ուրիշ ժողովուրդներու համար աշխատելու . կարծես Գերմանիադ քեզի շատ կարօտ է մնացեր . քեզի-պէսները լեցուն են հոն . քու ընկիւթդ հոն ոչինչ է գրեթէ, իսկ հայ հասարակութեան մ. ջ գուն ահագին դեր կրնաս խաղար :

Թէեւ այս բոլորը աղջկան սովորական խօսելու ու դատելու եղանակին շատ չէր նմանէր, բայց եւ այնպէս Հրանգի համար մեծ անակընդիմը չեղաւ : Մտածաւոր սրատեսութիւն մը կարիք չէր գուշակելու համար, որ այդ տոհմասիրական արշաւանքը ինքնին եկրորդական խնդիր էր ու միայն ճամբայ կը քանար ետեւէն գալիքին . նո՛ր նուազի մը նախերգը :

Բայց եւ այնպէս Հրանտ լսել չի կրցաւ, ու լուրջ շեշտով մը պատասխանեց .

— Ինքզ անշուշտ ամէնէն առաջ համոզուած ես, սիրելիս, որ ատոնք թէեւ սիրուն, բայց անաւղի գաղտողութիւններ են միայն : Ես մօր հասարակութեանը մասնաւոր օգուտ մը չունիմ, չիտակ է . սակայն հոս ո՛չ առաւելութիւն կայ, ո՛չ պակասութիւն . եթէ հասարակութեան անունով ինծի մեղադրելու ես ելեր, պէտք չէ մոռնաս, որ այդ հասարակութիւնը չի կրնար իմ ուժերս ու իմ ընգոհանակութիւններս գործադրել . ամէն մարդ ամէն բանի պիտանի չէ . ինծի հետաքրքրողը, ինծի զբաղեցընողը իմ մասնագիտութիւնս է : հո՛տ է, որ ես ոյժ մըն եմ, ուր ես ու եւ է դործ տեսնել կրնամ . իսկ մեր ազգը ո՛չ կարողութիւն ո՛չ ալ կարիք ունի իմ բնախօսութենէս օգտուելու, դեռ շատ

աւելի տարրական պահանջներ կան հոս պակաս .

— Դէ՛, իմ ըսածս ալ ճիշդ այդ է . այդ կարգի գիտական գործի մը ձեռնարկէ՛ . ինչո՞ւ անպատճառ բնախօսութիւն . ի՞նչ նեղ մտածմունք է այդ :

— Ձգիտես ինչ կը խօսիս, Մինէ :

Ու լսեց . լսեց աղջիկն ալ խոժոռած .

Ճամբան նեղցաւ . մէկ կողմը ընդարձակ պարտէզի մը հինկէկ պատն էր . միւս կողմը ծովու բարձր ժայռոտ եղերքը, ուր մէկ-կու շիպաէ ձողով վանդակ էր չինուած՝ վրտանդի տաջը ատնելու համար : Եւ այդպէս պատի ու ծովու դատարկութեան մէջ սեղմուած ճամբան հո՛տ ոլոր կու գար՝ գլուխը ջուրին մէջ երկնցուցած հրուանդանի մը երկիւղ կազմելով :

— Ուրեմն մտանադիտութիւնդ այդ տառիճան կը սրբե՞ս . հարցուց յանկարծ Մինէ՛ կանդ առնելով ծովուն դէմ, ու բռնեց վանդակումի կիսափուտ փայտէն :

— Ձարմանալու ի՞նչ կայ . ատանց իմ աշխատանքին ալ ի՞նչ խորհուրդ ունի կեանքս :

— Եւ ո՛չ մէկ ուրիշ աշխատութեան հետ չես փոխեր :

— Փոխել . այդ չապիկ չէ՛, հոգիս : Տարիներու ճի՛գ, կեղրոնացո՛ւմ, ոգեւորութիւն . ինչպէ՞ս թէ՛ փոխեմ . եւ ինչո՞ւ :

— Ուրեմն ո՛չ մէկ պայմանով :

Հրանտ միայն քննող աչերով նայեցաւ անոր :

Արեւ չի կայ այլեւս . հրդեհ մը կար միայն ոսկի բոցերով, վե՛րը ամպերուն մէջ . հրդեհ մըն ալ վա՛րը, խո՛ր, ծովու յատակին վրայ :

Իրենց բարձունքէն, աչքերը ծովու այդ հնոցին յառած՝ Մինէ անշարժ մնաց ակնթարթ մը :

Իր ըստը մտածումները մէկ հարցի մը վրէն էր զալարած հիմա . լարւած, կծկւած հարցի մը, որ սաստիկ լարուածն յանկարծ վերթող զսպանակի մը պէս իր պատանանէն դուրս գաակեց .

— Ո՞չ ալ իմ երջանկութեանս համար : Իմ ու քո՞ւ :

Աղջկան դէ՛մքն ալ հրդեհ կար . վարդէ

բոցեր կ'այրէին հոն վա՛ւ . կը վառէին եւ աչքերը :

Հրանտ աւելի մօտեցաւ , ափր կամաց մը դրաւ անոր ձողը ընտած ձեռքին վրայ , ու լուզումէն դողաղող ձայնով մը կցեց :

— Մինէ՛ , պարզ խօսէ՛ տեսնեմ , ինչ կուզես ինծմէ :

Աղջիկը սիրտ առաւ , ամբողջ դէմքովը դարձաւ աղուն ու աղաչող շեշտով մը վրայ առաւ :

— Հրանտ , հաւատ՛ ինծի , դիտութիւնը դիտութիւն է վերջապէս իր բոլոր ճիւղերուն մէջ , ամէն աշխատանք ալ՝ աշխատանք . այս ձեռով չեղաւ , թող լինի միւս ձեռի տակ այդ փոքրիկ զոհը դուն կրնաս բերեր ինծի . այդ դեռ զոհ ալ չէ՛ . Կովկաս դուն կրնաս լուրջ գործ գտնել . դիրք ալ , դե՛ր ալ , եւ փոխաբէնը պահանջէ՛ ինծմ , ալ ինչ որ կ'ուզես ամէն զոհ պատրաստ եմ ես քեզի , միայն մի՛ հեռացնէր ինծի իմ բնմէս , ձեռք մի՛ տար արուեստիս . այդ անկարելի է :

— Դե՛ , ես այդ գիտէի . եւ ճիշդ ատոր համար ալ այս բոլոր խօսակցութիւնը աւելորդ է : Արդէն այդ էր պատճառը , որ ես մինչեւ վերջերը ամէն կերպ աշխատեցայ քեզի հետ այդ մասին խօսք բանալէ խուսափելու . հաւակին մէջ իմ վարմունքս աղայսմտութիւն էր : Քուզէն եւ քուզին . կէս-լուրջ , կէս-կատակ . ատկէ անդին անցնելու չէինք . իմ յիմարութիւնս : Լսէ՛ , Մինէ՛ , մեր մէջ եղած կապին արգելքը ո՛չ իմ արատահման ապրելուս անհրաժեշտութիւնն է , ո՛չ ալ քու հոս կամ Կովկաս կապուած լինելը . այդ արտաքին գծաարութիւնները ու եւ է կերպ հարթելը անհնարին չէր :

— Ուրեմն . . . բացազանչեց աղջիկը յոյս առած :

— Միակ իսկական արգելքը քու դերասանութիւն լինելը է . դերասանութիւն մը չեմ կրնար ես իմ կեանքիս ընկեր ընել . այդ իմ կարողութենէս վեր է :

— Ա՛խ , ուրեմն դո՞ւն ալ . նոյն իսկ դո՞ւն . պոռաց աղջիկը թեւերն ու աչքերը բանալով :

Բայց իսկոյն թուլցած , դառն ու հեգնական շեշտով մը աւելցուց .

— Ի հարկէ՛ , անպատիւ , ինկած , ստո-

րին արարածի մը հետ . դերասանութիւն . . .

— Է՛ , Մինէս , այս վարկեանիս դոնէ դերասանութիւն մի՛ ընէր : Դուն շատ աղէկ գիտես իմ թեր ու դէմ հայեացքներս քո՛ւ ալ , քու գեղարուեստիդ մասին ալ . ուրեմն պարայ խօսքերը մէկդի : Սակայն ինչքան ալ որ այդ ամէնը գնահատել կարողանամ , ինքս անձա՛մը չեմ կրնար դերասանութիւն մը հետ կապուիլ :

— Այո՛ , փտա՛ծ դաղափարներ , կը հաուկընամ . բայց ատոր համար այսքան տարիներ եւրոպա թափառելու պէտք չունէիր :

— Անուանէ՛ ինչպէս որ կ'ուզես , փաստը այն է , ես չեմ կրնար տեսներ քեզի բեմին վրայ ամենքի դիտակներուն առկ , ու քու լիսներուն ետեւը շարունակ այդ դերասաններու ու « յարգող » պարոններու շրջանակին մէջ , որոնց մասին եթէ շատ իաջալական գաղափար մը չունիմ , անշուշտ ինծի չես մեղադրեր : Դուցէ՛ ծիծաղելի է այս խանդոտութիւնս . դուցէ՛ նոյն իսկ փտած , ինչպէս կ'ըսես , ու կիրթ զգացումներու չի վայլեր . չգիտեմ . այդ բոլորը ես ալ եմ խորհած , բայց խորհելէն ոչինչ չեմէր , ժառանգական բնազդներու է փաթթուած :

Մինէ յառած հայեացքով կը նայէր վարժայեաններու խումբի մը մէջ , ուր երկու զլիսաբաց փոքրիկներ մինչեւ աղդունքը հագուստնին վեր ժողած՝ մօտեր էին ջուրին մէջ ու բաներ մը կը փնտռէին : Մինէ անոնց կը նայէր անթարթ , տռանց ոչինչ տեսնելու :

Հրանտ շարունակեց .

— Եւ վերջապէս դուն քանի բեմի վրայ ես քու ուշադրութեանդ , տեսնելուդ ու զգացումներուդ մեծագոյն մասը հոն է ու հոն պիտի լինի : Իսկ ես , ո՛չ , չեմ կրնար բաւականանար սրտի մը մնացորդ բեկորներովը ու կրքերուդ կիսատ թափթրի ուքներովը : Այդ իմ կազմս է անգամ մը , իմ էութիւնս : Եւ ճիշդ այդ կէսով , քիչով չբաւականանալս է պատճառը , որ ես մինչեւ հիմա ապրեր եմ միս-միսակ . կը հասկընամք դուն ինչ է՝ խոշոր քաղաքի մը անկիւնը կոճղի մը՝ պէս միաշնակ : Եւ հիմա , երբ սիրտս յորդ , երջանկութեան երազներով քու գիրկդ կը վաղեմ , անա՛ դուն կու գաս ու այդ դերասանութեանդ

խորտուիլակիր թեւերուս մէջ կը նետես : Եւ կ'ըսես թէ ինծի կը սիրես . սիրե՛լ . այդպէ՛ս կը սիրէ կինը : Է՛ , մինչեւ հիմա ես ալ կը կարծէի , որ անտարակոյս բռնես պիտի պարզած ձեռքս . ինչ լուրջ վարանում կրնայ գոյութիւն ունենար սիրող կնոջ մը համար իր սիրած տղուն ու արուեստի մը մէջ : Բայց հիմա . . . հիմա ալ պարզ է ինծի . քու սէր ըսածդ զգացումներու խաղ մըն է միայն , ժամանց մը գուցէ . դուն չես կրնար սիրեր . յափշտակուելու , բռնկելու ու ձօնուելու կտնացիութիւնը նուազեր , մարեր է սրաից մէջ՝ աւելի ո՛յժ ու զիմացկունութիւն տալու համար քու արուեստի ձգտումներուդ . կինը հալեր է քու մէջդ ու այդ հալուածքէն ձուլուեր է դերասանուհին . . .

—Ա՛խ , ինչ անգութ ես . լուծուեցաւ աղջկան շշուկը իր սեղմըւած ծնօտներուն մէջէն :

—Հրանտ ակամայ կտրեց խօսքին թիւը , ու շնչառութիւնը ճնշուեցաւ . կեցաւ անշարժ բոլոր մկանները կծկած , առանց դէմքը ծովէն դարձնելու :

Երկնքի բոցերը յանդեր էին արդէն . ու գորշացած ամպերը վե՛րը մոխրակոյտ մըն էին հիմա , նախորդ հրդեհին մնացորդը . մոխրակոյտ մըն ալ վա՛րր ծովուն խորքը :

Մինէ՛ , որ նոյնպէս անշարժ կեցած էր՝ իր ներքին փոթորիկը խածած ակամաներուն տակ զսպել ջանալով , յանկարծ ծռեցաւ , ժողվեց փէշերը ու տենդոտ հապճեպով կ'ուզէր հեռանալ :

—Ո՛ւր :

Պոռաց տղան խենդի պէս , ոստումով մը հասաւ ու բռնեց պինդ անոր թեւէն :

—Թո՛ղ ինծի , թո՛ղ . չընչեց աղջիկը ազատել փորձելով :

—Վշտացա՛ր , Մինէ՛ . ինչ ըսի որ . ներքէ՛ , հաւատ , որ սրաիս ցաւէն է միայն : Ներքէ՛ , մի՛ երթար , ալ չե՛մ խօսիր , ալ չե՛մ վշտացըներ :

Աղջկան պրկուած թեւը թուլցաւ . թեք ինկաւ թեթեւ մը պատին , կախեց գլուխը , հայեացքը դամեց դետին . վերջը քիչ մը բարձրացուց նորէն ու ըստ անշնչաւ ձայնով մը , կարծես երազի մէջ ինքնիրենը խօսելով .

—Իրաւունք ունիս , բոլորովին իրաւունք

ունիս . էրիկ-մարդիկդ արդէն միշտ իրաւունք ունիք . դո՛ւն ալ , եղբայրդ ալ . զո՛հը մենք պիտի տանք , միայն մենք . ալ կը վախճամ ես քեզմէ . դուն իսկըքէ հանես պիտի ինծի . ա՛խ , դո՛ւք , ոչի՛նչ , ոչի՛նչ խնայել -չգիտէք , ոչինչ հասկընալ չէք ուզեր :

—Անգի՛նս , թո՛ղ պարապ խօսքերը մէկդի . ի՛նչ զո՛հ . սէրը փոխադարձ նուէր մըն է միայն . եւ ամենաթանկագին նուէրը , որ մարդ կրնայ ընել . ինքզինքը՛ , իր անըջած երջանկութիւնը , իր սրտին թըփրճառութիւնը , ա՛ռ , Մինէ՛ , ա՛ռ այդ բոլորը քեզի , քեզի ընդմիջաւ , ու եզի՛ր ի՛մս :

Ու անոր միւս ձեռքն ալ խելով՝ սկսաւ բոլոր ուժովը սեղմել :

Հովանոցը վար սահեցաւ Մինէի անութին տակէն , թեւերը յանձնած տղուն , աչքերը ազու բացոտ ու տենջոտ հայեացքին մէջ մաքնիսացած՝ Մինէ կը դողար . կը դողար ու կը ժպտէր իր կամքին հակառակ , տեսակ մը վերացած ժպտով : Ու իր խառնակ , իր ալ դժուա՛ր խլրտող մտածումներուն մէջէն միայն մէ՛կուն դեռ որոշ կը գիտակցէր . «պէտք է փախչի՛լ , փախչի՛լ »

« Փախչի՛լ , փախչի՛լ » . կը կրկնէր դեռ ան իր մտքին մէջ անընդհատ , երբ Հրանտ աղջիկը կրծքին քաշած ու պինդ փարած անոր մարմինն , սնծրեւի պէս համարյոյ կը տեղարայտէր ու չրթունքներուն :

—Դուն ի՛մս ես , Մինէ՛ . ի՛մս . ալ չե՛մ թողնել քեզի թեւերուս մէջէն . կը փոփոսար իր տաք շունչովը անոր դէմքին :

Աղջիկը յանկարծ սկսաւ հեծկլալ :

Ու Հրանտ անմիջապէս բաց թողուց աղջիկը գիրկէն . գունատ ու խճճուած կանդ առաւ դէմը , թեւերը անոր պարզած , տոանց ինչ ընելու գիտնալու :

—Մինէ՛ . . . հնչեց վերջապէս իր վախցած , աղաչող , ու չուար ձայնը :

Ու Մինէ արագ , վճռական շարժումով մը աչքերը սրից ձեռքովը .

—Լսէ՛ , Հրանտ , ես քու սիրուդ արժանի չեմ . ձգէ՛ հեռանամ . Համոզուէ՛ , որ ես չունիմ քու սպասած քաջութիւնը այսքան ժամանակ փայփայած ձգտումներս , ողբերութիւնս , հակումներս վստահ ձեռքով մէկդի

նետելու . եւ այդ վատութիւն , դաւ կը լինէր վերջապէս ինքս ինծի , իմ անուրջներուն ղէմ : Ո՛հ : Զգէ՛ հեռանամ . պէտք ունիմ առանձին ամփոփուելու . զուէն իմ մտածելու հիմքերս անդամ տակնուվրայ պիտի ընես . ձգէ՛ , ձգէ՛ . . .

— Ո՛ր , եւ արդէն մո՛ւթ է . զոնէ՛ . . .

— Կ'աղաչե՛մ , թո՛ղ , եթէ կաթիլ մը յարգանք ունիս դէպի ինծի :

Տղան քարի պէս մնաց պատին տակ . ու խելառ արտայայտութեամբ կը նայէր աղջկան ետեւէն , որ երկու ձեռքով կրճքին սեղմած գետնէն վերցուցած հովանոցը՝ արագ կը հեռանար . ու շուտով ալ աներեւոյթ եղաւ պատին կոյութեանը ետեւ :

Մութը արդէն իր մանուածքը փաթթելու էր սկսեր պատէն վար կախուած թզենիի մը լայնատերեւ ճիւղերուն մէջ ուրոնց տակը կեցած էր հիմա Հրանտ՝ ամբողջ թիկունքով պատին կրթնած . ո՛չ մէկ շարժում . զգացումները բեկուած ու խառնակ , մտածումները ցրիւ ու անորոշ :

Ծերուկ մը իր գաւազանին յեց՝ ծանր քայլերով եկաւ անցաւ անոր առջեւէն՝ անընդհատ հազալով . ու հեռացաւ :

Ծառէն կախուող մութին թելերը խտացան , խճճուեցան , ու հալեցուցին իրենց մէջ աղուն մարմինն գծերը :

Ու ծովն էր միայն վարէն , որ թանձրացող խաւարի խորհրդաւորութեան մէջ կուգար իր կիսաձայն արտունջները մռայլ ժայռերու ծերակոյտին ոտքը դնելու :

(Շարունակելի)



ԱՆՔԱՏԻԿ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

Ե Ի

ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒ ՅՈՒՑԱԿԸ

Շարունակութիւնը զառաւական է . Պոլսոյ աղքատ նախակրթարաններու է . որբանոցներու ցուցակին , որով առաջարկուած էր Խմբագրութեան ստանձնած տասը օրինակին վրայ պատուակալ բաժանորդագրութեամբ հարկ եղած դրամական նպաստները աւելցնելով՝ յիշուած բոլոր տեղերը ճրիթերը դրել :

26. Վարագայ վանքի որբանոց , Վան
27. Կարմրաւորի վանքի որբանոց , Վան
28. Սալնապատի Ս . Գրիգոր վանքի որբանոց . Վան
29. Բաղէչի Խնդրակատար վանքի որբանոց
30. Եղեսիոյ Ս . Սարգիս վանքի որբանոց
31. Խարբերդի Խուլէ վանքի որբանոց
32. Մուշի Առաքելոց վանքի որբանոց
33. Արաբկիրի որբանոց
34. Մարաշի որբանոց
35. Այնթապի որբանոց
36. Մալաթիոյ Ս . Լուսաւորիչ վանքի որբանոց
37. Զմիւռնիոյ Ներսէսեան որբանոց
38. Կեսարիոյ Ս . Կարապետ վանքի որբանոց
39. Գաղատիոյ Ս . Աստուածածին վանքի որբանոց
40. Ազրիանապոլսոյ որբանոց
41. Ս . Ներսէսեան նախակրթարան , Գընալը
42. Պէղճեան նախակրթարան , Գարթալ
43. Ս . Լուսաւորչեան նախակրթարան , Գուզկունճուք
44. Ս . Նիկողոսեան նախակրթարան , Պէյքոզ
45. Ս . Մարովալեան նախակրթարան , Պէօյիւքաէրէ
46. Մամիկոնեան նախակրթարան , Եէնի զիւղ
47. Երից Մանկանց նախակրթարան , Պօյաճը զիւղ
48. Ս . Թագէտեան նախակրթարան , Բումէլի հիսար
49. Ս . Թարգմանչաց նախակրթարան , Գուրու Չէշմէ
50. Ներսէսեան նախակրթարան , Ալթը մէրմէր

(Շարունակելի)



ԶՂԱՅԻՆ ԿՆՈՋ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆԸ

ՏՈՒՐՔ ԴԱՌԻԹԵԱՆ



ԱՆՈՐԴ յօղուածներով խօսեցանք արդէն նախագլուշական այն միջոցներու մասին, որոնցմով կարելի է ջղային ծնողքէ սերած աղջիկները զերծ պահել ջղային ըլլալէ, չեղտելով միայն գլխաւոր ու հիմնական կէտերը որոնց գործադրութեամբը կատարելապէս վստահ ենք թէ փափաքուած արդիւնքին կարելի է հասնիլ։ Ամէն անոնք, որոնք լրջօրէն կ'ըմբռնեն ծնողական պարտականութիւնները ու կը փափաքին իրենց աղջիկները տապալայ անթերի կեանքի մը պատրաստել, կը յանձնարարենք իրենց որ մօտէն ու ընդարձակօրէն իմաստասիրեն այս նիւթը, կ'ապահովենք զիրենք թէ անհզուտ աշխատութիւն մը ըրած չպիտի ըլլան եւ մեծապէս գոհ պիտի մնան։ Մեր բաղձանքն է հասկցնել ընթերցողներուն թէ յօղուած մը գրելու եւ կամ վարժապետական քարոզ մը խօսելու մարմաջը չէ որ կը թելադրէ մեզ այս տողերը գրել, այլ այն հաստատ համոզումը թէ ջղայնութիւնը մեր ընտանիքներուն մէջ առատօրէն մուտք գտած ու սպառնալից երեւոյթներ առած է, թէ մեր անդուլ ու կոշտ բարքերուն հետեւանքովը, ջղայնութիւնը շատ աւելի փտանդաւոր է մեր

մէջ քան ճշմարտօրէն նրբացած ու քաղաքակրթուած միջավայրերու համար, հետեւաբար դրական ժամանցք մը նկատելու չէ այս տողերը, այլ մեր բնութանեկան իրական մէկ վերքը շօշափող հարց մը, ամէն կերպով արժանի նկատողութեան առնուելու ու ուսումնասիրուելու մեր այն տիկիկներէն՝ որոնց զուարթ գլխարկ կրելէ զատ խորհելու ալ սովորութիւնը ունի։

Բնական տրամադրութիւնք, կեանքի կոիւր ու ընտանեկան հոգերն ու վիշաբեր մեծագոյն պատճառներն են ջղայնութեան այս աստիճան բազմաճառուն, եւ որովհետեւ փոքրիկ աղջիկներու համար կեանքի կոիւր ու վիշտ չկայ, այլ միայն ժառանգական միատու մը, տոոր համար կարեւոր է որ նախազգուշական միջոցները շատ կանուխէն ի գործ դրուին, որպէս զի ապագայ կեանքի մը բոլոր հոգերուն դիմադրել կարելի ըլլայ։

Ներկայ յօղուածով պիտի խօսինք մասնաւորապէս այն միջոցներուն վրայ որոնցմով կարելի է, արդէն ջղայնութեամբ վարակեալ մը, եթէ ոչ բոլորովին բուժելու, գէթ կեանքը տանելի ընելու աստիճան դարձանելու։ Այս հիւանդները ընդհանրապէս հասած աղջիկներ եւ կամ 40 տարեկան կիներ են, որոնք շարունակ հոգեր ու սրանեղութիւններ ունին եւ եթէ չունին իսկ կ'ստեղծեն, ու այդ շա-

բունակական գրգռումներու պահուն իրենց ջգայնութիւնը աստիճանաբար կը սաստկանայ նորանոր կերպարանափոխութիւն՝ եր ստանալով եւ զիւրին է երեւակայել զարմանկան կանչուած բժշկին փափուկ կացութիւնը՝ Այս պարագային մէջ քառորդ ժամուան քննութեամբ մը, ջգային հիւանդութիւն է ըսելով. Bromure գրեւն բաւական չէ, բժիշկը շատ աւելի մեծ գեր մը ունի կտաարելիք. պէտք է իր բարոյական բոլոր ազդեցութիւնը ի գործ դնէ, որպէս զի կարենայ հոգեբուութեամբ ու առողջապահական միջոցներով փրկել իր հիւանդը. իսկ միւս կողմանէ ալ հիւանդին շուրջը գանուողները պէտք է ամէն դիւրութիւն տան բժիշկին. որով միայն կարող է կտաարել իր փափուկ դերը: Յետոյ պէտք է նաեւ այնպիսի բժիշկ մը ընտրել որուն վրայ վստահութիւն ունենայ հիւանդը. միանգամայն քաշուելու չէ բժիշկին հազորդելու ընտանական կարգ մը գաղանիքներ, որոնք շատ անգամ կ'առաջնորդեն բժիշկը իր բռնելիք ընթացքին մէջ. որովհետեւ հիւանդին երեսը նայելով բժիշկը չկրնար դիմել անոր հոգին տանջող վիշտերը, միաքը շարչրկող մտածումները, աստիճան մը պէտք է դիտակից ըլլալ հիւանդի ներքին կացութեան անոր օգտակար խորհուրդներ կարենալ տալու համար:

Ջգայնութենէ դերծ մնալու համար նախադրական միջոցներու վրայ խօսածնուս նշման, հոս ալ յաջորդաբար պիտի քննենք հետեւեալ դարմանները ու պիտի ջանանք կարելիին չափ ցուցնել անոնց կիրարկման եղանակները:

1. Բարոյական առողջապահութիւն.
2. Մանդաութիւն.
3. Կլիմայ.
4. Զրաբուութիւն.
5. Մարձում (massage).
6. Մարմնամարզ.

1. Բարոյական առողջապահութիւն — հոգեբուութիւն. — Ինչպէս խօսած էինք արդէն՝ հոգեկան բուռն յուզումներն ջգայնութեան պիտաւոր պատճառ-

ները. այդ յուզումները աստիճանաբար կը տկարացնեն անհատին բարոյական նկարագիրը ու այն աստիճանի ջգայնութեան մը (impressionabilité) կը հասնեն զինքը, որ իր բարոյական անհատականութիւնը կորսնցունելով, ենթակայ կ'ըլլայ միջավայրին ու շուրջը գանուողներուն ազդեցութեանը: Սրգարեւ մեր մէջ շատ կը հանդիպիք այնպիսի կիներու, որոնք իրենց յատուկ խորհելու ձեւ մը չունին, ժամէ ժամ կը փոխուին ու միշտ վերջին անգամ իրենց հետ խօսակցողին ազդեցութեանը տակ կը մնան:

Հիւանդին այս հանգամանքը սակայն օգտակար կերպով կրնայ գործածուիլ բժիշկին կողմանէ, այսինքն բժիշկը հիւանդին մօտը գանուողներէն ամէն տեղեկութիւնները նախապէս քաղած ըլլալով, համբերութեամբ հիւանդին մօտիկ ընելէ վերջ կրնայ անոր ծայրայեղ ջգայնութենէն օգտուելով թելադրել իրեն օգտակար ու առողջ դադափարներ, հեռացունել իր միտքէն զինքը չարչարող մեղամաղձոտ խորհուրդները, ու վերջապէս ջգացնել իրեն ու զինքը համոզել թէ լուրջ ու վտանգաւոր հիւանդութիւն մը չէ ունեցածը, այլ ջգային դրութեան գործելու եղանակին անբնական մէկ վիճակը զոր զարմաններով կարելի է բոլորովին բուժել:

Բայց որպէս զի բժիշկը կարող ըլլայ իր այս ըսածները ամբողջովին ընդունել տալ հիւանդին, պէտք է անոր հանգէպ վերջին աստիճան բարեսիրտ ու անկեղծ գտնուիլ, առանց հեաք մտերմութեան մտնելու, եւ շատ անգամ պէտք է հաստատամիտ ու խրատապահանջ ըլլալ իրեն համար, որպէս զի կարելի ըլլայ ազդեցութիւն մը ընել վրան:

Ջգայնութեան մէջ, մասնաւորապէս ջրլախտաւոր (hystérique) կիներու համար, քնացունելով թելադրութիւն (suggestion hypnotique) ընելն ալ օգտակար ծառայութիւններ կրնայ մատուցանել:

Այս կարգի հիւանդներուն համար մեկուսացումը (isolement) անհրաժեշտ պայման մըն է. արգարեւ ջգային կինը հեռանալով այդ միջավայրէն, այն ընկերութենէն որուն ծոցին մէջ ծագում առած է իր ջիղերուն խանդարումը, մէկ հարուածով ազատած կ'ըլլայ զինքը գրգռող մեծագոյն պատ-

ճառներէն , մանաւանդ թէ իր առօրեայ կեանքին մէջ զինքը չըջապատողներու ազդեցութեանն . զերծ մնալով բժիշկը շատ աւելի ազդու կերպով կրնայ գործադրել իր իշխանութիւնը , եւ աւելի հեշտ կերպով կրնայ անոր թելադրել շինիչ ու կազմութիւն խորհուրդներ :

Գիւղի կեանքը եւ մանաւանդ մասնաւոր դարմանատուններու մէջ զրուած խնամքը շատ աւելի օգտակար կրնան ըլլալ , քան ուրիշ որ եւ իցէ դարման մը : Այդ նպատակով հաստատուած մասնաւոր դարմանատուններու մէջ , հիւանդը կանոնաւոր ու խաղաղ կեանքի մը ու խիստ կարգապահութեան (discipline) ենթարկուելով , փութով կը վերստանայ իր թուլցած ջիւղերուն կորովը , որոշ ժամերու մէջ ուտելու , արթննալու , պտտելու , պառկելու վարժութիւնը կը զօրացունէ իր կամքը . քան մը ընելու կարող ըլլալու գիտակցութիւնը կը բարձրացունէ իր բարոյական անհատականութիւնը , եւ երբ ասոնց միանայ այդ կարգի դարմանատուններու մէջ ի գործ զրուած կանոնաւոր ջրաբուժութիւնը , երեքարարութիւնը ու մարմնի մը (massage) որոնք թէ ֆիզիքական եւ թէ անուղղակի կերպով բարոյական լաւ ազդեցութիւն մը կ'ընեն հիւանդին վրայ , ալ վատահ գէտք է ըլլալ թէ ջիւղերը իրենց բնական ուժը վերստացած են : Սակայն այս ամէնքը գործադրելու թէ միջոցները եւ թէ կիները կը պակսին մեր մէջ :

Ճամբորդութիւնն ալ օգտակար միջոցն է զոր պէտք չէ զանց ընել երբ պարտաւորութիւն կը ներկայ , բայց այս մասին ալ պէտք է նախապէս հիւանդին յարմար ուղեգիծ մը պատրաստել . արդարեւ երկաթուղիէ երկաթուղի , պանդոկէ պանդոկ թափառելու աւելի քուսիսքի կը յարմարի քան թէ ջղային կնոջ մը , ուստի պէտք է այնպէս մը ճամբորդել որ հիւանդը բնաւ չի յոգնի ու նոր տեղերու այցելութիւնը հաճելի ու զբօսեցուցիչ ապաւորութիւն մը ներգործէ իր վրայ :

Այսու հանգերձ ջղային կիներ կան ուրոնց դարմանումին համար մեկուսացումը անհրաժեշտ պայման մը չէ , ասոնք ջղային թեթեւ խանդարումներ միայն ունին , զորս կարելի է խնամել հիւանդին սովորական

կեանքին մէջ քիչ մը զբօսանք , հաճելի զբաղումներ ու առողջապահիկ միջոցներ մտցնելով :

2. ՍԵՆՊԱՌԱՅԻՆ . — Ջղային կիներէն մէկ մասը ստամոքսի որ եւ է անհանգստութիւն մը չզգար , կերածը շատ լաւ կը մարսէ եւ արտաքինը առողջ ու զօրեղ երեւոյթ մը ունի : Այս տեսակ կիներու համար անհագութեան մասնաւոր փոփոխութիւն մը ընել աւելորդ է , միայն իրենց ջիւղերը դարմանելը բաւական է : Բայց ջղային կիներէն շատերը ստամոքսի անհանգստութիւններով կը տառապին եւ երբեմն այնչափ սաստկօրէն , որ իրենց ջղայնութիւնը տգիտաբար երկրորդական նկատելով , բժիշկին կը դիմեն դժուարամարտութեան համար , եւ այդ պարագային մէջ հազուագիւտ չէ տեսնել բժիշկներ՝ որոնք հիւանդին ստամոքսը անօգուտ դեղերով կը լեցնեն փոխանակ բուն իսկ հիւանդութիւնը դարմանելու :

Այս հիւանդները բնականապէս atonie gastro-intestinale կոչուած հիւանդութիւնը ունին . ամէն անգամ , ճաշէ վերջ ստամոքսին վրայ ծանրութիւն մը , ուռեցք մը կը զգան , երեսներն տաքութիւն մը կ'այրէ , գլուխին կը ծանրանայ եւ մրափել կ'ուզեն եւ այս կը տեսէ մարսողութեան ամբողջ տեւողութեան միջոցին եւ յետոյ կ'անհետանայ , կան այնպիսի ջղային անհանգստեր ալ որոնց ստամոքսը լայնցած է եւ կերակուրի մէկ մասը հոն մնալով , խմորում մը (fermentation) տեղի կ'ունենայ :

Ջիւղերով արդէն տկար հիւանդին վրայ , ստամոքսի այս խանդարումը , բարոյական հանգին անկում մը յառաջ բերելով , մարմինին անանումը կը պակսի ու հետզհետէ կը նիհարնայ , այն աստիճան որ երբեմն զայն դարմանելու համար մեծամեծ դժուարութիւններու կը բաղխուի , հիւանդը կ'երեւակայէ որ ստամոքսի անբուժելի հիւանդութիւն մը ունի եւ այդ գաղափարը արդէն գլխաւոր արգելքը կ'ըլլայ ապաքինման : Այս կարգի հիւանդներու համար բանաւոր է որ մասնաւոր դարմանատուն մը փոխադրուին , ուր Weir Mitchell նշանաւոր բժիշկին սահմանած կանոնաւոր դարմանումը կարելի է արդիւնաւոր կերպով գործադրել , իսկ մեր

միջավայրին մէջ կան տրամադրելի այդ տեսակի զարմանատուններ . . . :

3. Զրաբուժութիւն . — Ուրիշ տոթիւ խօսած ենք թէ օր աստիճան մեծ հաւատք մը ունինք պաղ ջուրի գործածութեան վրայ, կը փափաքէինք որ վերջնականապէս մեր բարքերուն մէջ մուտք գտնէր այդ, ու ոչ միայն հիւանդութեան պարագային, այլ նոյն իսկ առողջներն ալ պաղ ջուրի լողանքը իբր տոթութիւն ընդունէին :

Ջրայիններու համար պէտք է շատ ըզգուշութեամբ գործածել պաղ ջուրը, բուռն գրգռումները անոնց համար անտանկի են եւ հակառակ արդիւնք մը կուտան :

Պէտք է հիւանդութեան աստիճանին համեմատ, զաղջ կամ տաք ջուրով ու թեթեւ ճնշումով գործածել տուելու եւ կամ տաք ջրի չսկսած, թաց սաւանի դրութիւնը գործածել ու բաւական վարժութիւն մը ստանալէ վերջ տաք ջրի անցնիլ : Լաւ արդիւնք մը ունենալու համար տաք ջուր 2—3 ամիս շարունակելու է, իւրաքանչիւր անգամ անոր տեսողութիւնը վայրկեանը չանցնելու պայմանաւ :

Տուրք որպէս զի օգտակար ըլլայ, անհրաժեշտ է որ լողանքէն վերջը հիւանդը հաճելի տաքութիւն մը զգայ, հակառակ պարագային չփութնալով եւ կամ թեթեւ մարմնամարզով մարմինը տաքցնելու աշխատելու է :

Երբ հիւանդը պաղ ջուրի գործածութեան կարող չէ զիմադրել, այն ստեն պէտք է douche écossoise ըստածը գործածել, այսինքն նախ 36—37 աստիճան տաք ջուրով տաք մը տալ ու հետզհետէ ջերմութիւնը մինչեւ 40—45 աստիճանի հասցունելով՝ երկու վայրկեան շարունակելէ վերջ յանկարծ 8—10 աստիճանի պաղ ջուրով տաք մը ընել . որուն տեսողութիւնը ամէնէն շատը 10 երկվայրկեան պէտք է ըլլայ :

Երբեմն հիւանդներ վերջին աստիճան զգայուն են եւ վերը յիշուած միջոցներուն շփուար կը վարժուին, այն ստեն մարմինն վրայ չոր ու պարզ չփութնալով սկսելու է, յետոյ eau de cologne ով կամ զաղջ ջուրով :

Գաղջ (28—32 աստիճան) կամ տաք (33—36 աստիճան) ջուրի լողանքներն ալ կրնան օգտակար ըլլալ, մանաւանդ երբ ջրայինու-

թեան հետ յօդացաւ ալ միացած է, սակայն այս լողանքները կը թուլցնեն, կը տկարացնեն մարմինը . ուստի պէտք չէ զայնս երկարատեւ շարունակել :

Դիտու ցաւ ու գլխու պառոյտ ունեցող ջրայինները պէտք է զգուշանան պաղ ու զօրաւոր տաք առնելէ. մանաւանդ թէ տուշը պէտք չէ վիզին ու գլխուն ուղղուի, այլ մարմնոյն վարի մասերուն, իսկ անքունութիւն ունեցողներուն համար տաք տուշը, կամ տաք ջուրի լողանքը օգտակար կրնայ ըլլալ :

Վերջապէս ստամոքսի անհանգստութենէ տառապող ջրայիններու համար մանաւանդ պաղ տուշը շատ օգտակար է երբ գօտի մը մէկ երրորդ մասը թրջելով ստամոքսին վրայ կը փաթթուի, գօտիին չոր մնացած մասը թրջած մասին վրայէն անցունելով, եւ յետոյ ուրիշ բոլորէ գօտի մըն ալ ասոր վրայէն փաթթելու է, թաց գօտի մը կէս ժամու չափ ստամոքսին վրայ մնալը բաւական պէտք է համարուի :

4. Կլիմայ . — Ջրայինները օդի փոփոխութիւններու հանդէպ շատ զգայուն կ'ըլլան, ցուրտն ու տաքը անհաճոյ եւ երբեմն նոյն իսկ վնասակար ապաւորութիւն մը կ'ընեն անոնց վրայ եւ ընդհանրապէս բարեկիստն կլիմաները կը սիրեն :

Այսու հանդերձ շատ անգամ զանոնք օգտափութեան դրկել հարկ կ'ըլլայ, ուստի քննենք թէ օր տեսակի կլիմաներն են որ անոնց համար ամէնէն յարմար օգտափութեան վայր մը կրնան նկատուիլ; Լեռնայիճը, զաշտայիճը թէ ծովայիճը :

1. Լեռնայիճ կլիմայ . — Լեռան օդը հին ժամանակներէն ի վեր մեծ համբաւ մը կը վայելէ եւ արդարեւ ջրայիններու համար ամառուան յուլիս ու օգոստոս ամիսներու մէջ լեռնային տեղեր բնակիլ օգտակար է :

Լեռներու վրայ, օդին ճնշումը համեմատաբար նուազ է, եւ ջերմութիւնը քիչ . երկինքը աւելի պայծառ, օդը չոր ու մաքուր . արեւուն ճառագայթումը աւելի չեղտակի՝ ու հովերը աւելի մեղմ են, եթէ բնակութիւնը մօտաւոր լեռներու շղթայներէն պաշտպանուած է :

Բնակելու սահմանուած տեղը 1600-2000 մեթրէն աւելի բարձր ըլլալու չէ, ինչպէս յայտնի է՝ մթնոլորտի ճնշման նուազումը, չնչառութեան, սրտի բարախման ու մարմնոյն կեղրոնական փերմութեան վրայ կ'ազդէ, հետեւաբար ջղային կիները մէկէն ի մէկ այնչափ բարձր տեղերը բնակելու չեն, այլ 1000 մեթր բարձրութենէ սկսելու են, յետոյ աւելի բարձրերը ելլելու պայմանաւ:

Առաջին օրերը պէտք է նստողական կեանք մը վարել, պտոյտները կը յողնեցնեն հիւանդը. եւ ապարդիւն կը մնայ օդափութութիւնը. իսկ այն ջղայինները որոնք չափահարացած, տկարացած են, բարախումներ ունին, լեռան օդը անոնց համար յարմար չէ, աւելի լաւ է դաշտային եւ կամ 500-600 մեթր բարձրութիւն ունեցող տեղերու օդը:

2. Դաշտային կլիմայ. — Դաշտերու օդը ջղայիններու վրայ մասնաւոր ազդեցութիւն մը չունի, թէեւ բնակելու համար հոն գացողները մեծապէս կ'օգտուին, որովհետեւ քաղաքի աղմուկներէն ու իրենց ամենօրեայ հոգերէն կը հեռանան եւ թէ դաշտերու օդը մեղմ ըլլալով հիւանդները կրնան երկար փամեր տանէն դուրս անցունել ու այդպէսով մաքուր օդ ծծել:

3. Ծովային կլիմայ. — Ծովին օդը աւելն ջղայիններու չի յարմարիր, օդը զով ու խիստ է եւ հովը յաճախ ու բուռն, եւ ծովի լողանքները ջրղերով արդէն յուզեալ այս հիւանդներուն վրայ գրգռիչ արդիւնք մը կ'ունենան, կ'ըսկսին անքունութիւն, թորութիւն, սրտի պատիկ բարախումներ ու մեկամաղձոտութիւն ունենալ, նմանապէս յօգացաւ ունեցողներուն ցաւերը մէջտեղ կ'ելլեն եւ հետեւաբար զգուշանալու է ծովու օդէն, մանաւանդ Պոլսոյ մէջ, ուր գրեթէ բոլոր դիւղերը ծովեզերեայ են:

Միայն դառաւարդ մը ջղայիններ կան, որոնք զրգոտման չունին, այլ թուլութիւն, ախտատելու դժուարութիւն ու դժուարա-

մարտութիւն մը. ասոնց համար ծովի օդը բոլորովին աննպաստ չէ եւ կրնան տարին քանի մը ամիս ծովեզերեայ տեղեր բնակիլ:

4. Մարմնամարզ եւ Մարմնամն. — Մարմնամարզը արեան շրջանը կը փութացնէ, թոքերը կը խոչորցնէ ու կը զօրացնէ եւ անուղղակի կերպով ամրողջ մարմինը կը կազդուէ, հետեւաբար ջղայիններու համար օգտակար դարման մըն է: Այսու հանդերձ այդ հիւանդները այնչափ տկար են որ պէտք է չափ պարզ ու թեթեւ մարմնամարզներ ընտրել, որպէս զի չսոքին ու չփնասուին, իսկ չափ տկարներու համար մարմնամարզը բոլորովին արդիւնաւոր է, պէտք է մարձել (massage) զանոնք որ միւսնոյն արդիւնքը կուտայ եւ երբ բաւականին չափ կազդուէրուն, կրնան այն առին ուրիշ մարմնամարզներու սկսիլ:

Որպէս զի մարմնամարզը արդիւնք մը տայ, պէտք է լաւ որոշել կատարուելիք շարժումներու ձեւը եւ արուելիք ախտաւորութեան քանակը, հոն կը կայանայ մարմնամարզով դարմանումի բուն գաղափարը:

Եւ ճիշտ այս մասին է որ մեր բոլոր դպրոցներուն մէջ երբէք չէ ըմբռնուած այնպէս կատարել տալ մարմնամարզի փորձերը, որոնցմէ դպրոցականները օգտուին:

Ջղային կիներու ապաքինման համար առաջարկուած այս բոլոր պայմանները եթէ գործադրուին ամէն ոք կրնայ ապահով ըլլալ թէ ջղային կիները կը սկսին մատի վրայ համբուիլ:

Այստեղ պէտք է խոստովանինք սակայն որ մեր բարքերուն մէջ այնքան մուտ գտած չեն առողջապահական միջոցներու գործադրելը որ եթէ նոյն իսկ ընթերցողութիւններէ ոմանք ուզեն մեր առաջարկած դարմանները փորձել, կ'ընդունին որ նիւթական դժուարութիւններու պիտի հանգալին, սակայն չենք ընդունիր որ այդ դժուարութիւնները անհարթելի են:





ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մ. Շ.



ԱՂԱՔԱԿԱՆ ընդհանուր
կացութիւնը վերջին շա-
բաթներուն հետզհետեւ
աւելի պարզուելու ըն-

թացք մը ստացած է, թէեւ միշտ կա-
րելի է նոր անակընկալներու սպասել ու-
րոնք մէկ անդամէն ամէն ինչ կերպա-
րանափոխ ընեն:

ՖԻՆԱՆՍԱՆ ուր նախագահական տաղ-
նապ մը ունէր, գրեթէ անցուցած է:
Հանրապետութեան նորընտիր Նախա-
գահը Պրն. Լուպէ հետզհետեւ ժողո-
վրդականութիւն մը կը շահի: Ինչպէս
Ֆռանսայիները իրեն կ'ըսեն. Պրն. Լուպէ
հինաւուրց հանրապետական մըն է,
մարդկայնութեան և իրաւունքի բոլոր
սկզբունքներուն ջերմ պաշտպան մը, և
անհաւանական չէ որ իր հակազդող
ոյժովը կարող ըլլայ հանրապետութեան
սկզբունքներուն թշնամիները չեղօքա-
ցընել: Տրէյֆիւսի խնդիրը կայ, որ այս
միջոցին վճռաբեկ ատենի նիստերը
սկսած է գրաւել, և հաւանական է որ
թէ ֆռանսայի և թէ ընդհանուր քա-
ղաքակիրթ աշխարհի հանրային կար-
ծիքը հանդարտեցնող որոշում մը կարելի
պիտի ըլլայ տալ, որով խնդրին վերա-
քննուած ճշմարտութիւնը մէջտեղ ելլէ
ու անիրաւութեանն ալ, եթէ կան,
յայտնուին ամէնուն:

ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ՖԻՆԱՆՍԱՆ միջեւ
մանաւանդ Ֆաշտայի խնդրէն ի վեր
տեսակ մը ցրտացում սկսած էր տիրել,
և թէ մամուլը և հանրային կար-
ծիքը ֆռանսայի մէջ, շատ աննպաստ
ձեւեր ստացած էին հանդէպ Անգլիոյ:
Պէտք է գիտնալ որ վերջին քանի մը
տարուան միջոցին ֆռանսայի արտա-
քին քաղաքականութեան մէջ, Գեր-
մանիա ամէն կերպով հանգիստ ձգած
է զինքը և գլխաւորաբար եղած է Անգ-
լիա ուր ամէն ուրէք դէմ ելլելով միշտ
դժուարութիւններ յարուցած է: Ու այս
ամէնքէն վերջը երբ Ֆաշտայի դժուա-
րութիւնները կը պատահէր, հանրային
ըկարծիքը շատ կը լարուէր Անգլիոյ դէմ,
թէեւ միւս կողմէ, ֆռանսական կա-
ռավարութիւնը, խզումներէ միշտ զգոյշ,
անգլիական անդրդուելի պահանջներու
առջեւ տեղի կ'ուտար: Այս օրերս եր-
կու կառավարութեանց միջեւ Նիկէիի
պայմանագրութեան ստորագրուելը, որ
մանաւանդ կ'ըսուի թէ ֆռանսայի փա-
վաքներուն համաձայն եղած է, Անգ-
լիոյ մասին ֆռանսայի մէջ տիրող ան-
նպաստ կարծիքը բաւական կը մեղմա-
ցընէ:

ՍՊԱՆԻՈՅ ԵՒ Մ. ՆԱՀԱՅԳՆԵՐՈՒ մի-
ջեւ քանի մը օր առաջ հաշտութեան
պայմանագրերները փոխանակուելու վրայ
էին, ատկեց անմիջապէս վերջը Ամերի-
կայի կողմէ 20 միլիոն տուարի գումար
մը պիտի վճարուի Սպանիոյ, որով կը
փակուի Սպանիա Ամերիկեան խնդիրը,

Սակայն Սպանի և Ամերիկեան խնդիրը երկուքի բաժնուած է այսօր սպանիական և ամերիկեան անշատ խնդիրներ ըլլալով։ Մանաւանդ Սպանի և ամերիկեան պատերազմէն վերջը, Սպանիոյ ներքին յուզումները շատցած են, եւ կարյուսեաններն ալ կը սպասեն հաշտութեան վաւերագիրներու փոխանակութիւն, կարեւոր դործունէութիւն մը սկսելու համար երկրին մէջ։ Տօն կարլոս յաջողած է արդէն Ֆռանսայի եւ Անգլիոյ մէջ քանի մը միլիոնի փոխառութիւն մը ընել, և այդ գումարը պիտի յատկացնէ կարյուսեան կուսակցութեան աւելի ազդեցիկ դառնալուն համար։ Միւս կողմէ ալ Մ. Նահանգները իրենց ներքին անդորրութիւնը կորսնցուցած են Քուպայի և փիլիպիններու բնիկներուն երեսէն։ Այն տեղւոյնքը միշտ նոր սպառազինութիւններ կ'երթան և տակաւին կարելի եղած չէ որ ամերիկեան դրօշի տակ ամէն բան բնական ընթացք մը ստանալով, Մ. Նահանգները սկսին, փոխան իրենց այնքան նիւթական զոհողութիւններուն, իրենց այս նոր սեփականութիւններէն նիւթապէս օգտուիլ։

ԻՏԱԼԻԱ, ալ ունի իր ներքին դժուարութիւնները։ Անցեալ ամառուան ներքին չփոթութիւնները տակաւին չեն մոռցուած երկրին մէջ, մանաւանդ որ ընդհանուր ներում մը չէ եղած այդ չփոթութիւններուն լոյր մասնակցողներուն։ Սակայն գործերը իտալիոյ մէջ առ այժմ բնական ընթացք մը ստանալու վրայ են։ Իտալիայի համար Իրիթրիայի խնդիրն ալ կարգադրուած է իրեն ի նպաստ և Մենեիք թագաւորին բարեկամութենէն նորանոր շնորհներ կը սպասէ Ումպէրթօ թագաւորը։ Վերջին ամիսներու միջոցին ինչ որ նորութիւն մըն էր իտալիոյ արտաքին քաղաքականութեան համար Չինաստա-

նի մէջ իր գործունէութիւնն էր, նաւահանգիստ մը ձեռք անցնելու համար։ Իտալական քաղաքականութիւնը Չինաստանի մէջ առաջ քշելու համար կարեւոր բանակցութիւններու կը մտնէր Տէ Մարթինօ, չինական արտաքին գործոց պաշտօնատան հետ եւ այդ առթիւ Տէ Մարթինօյի և Մանտարիններու միջեւ թիւրիմացութեան մը առթիւ խզում մը յառաջ գալուն, մանաւանդ կը տեսնուէր Չինաստանի տեղի տալու քաղաքականութիւնը հանդէպ իտալիոյ ալ երբ իր Հռոմի ներկայացուցիչը ներում կը խնդրէր Ումպէրթօ թագաւորէն և արտաքին գործոց նախարար Պրն. Գանէվարոնէն Բէքինի մէջ իրենց դեսպանին մէկ սպառնական ծանուցագիրը առանց նկատողութեան առնելու մերժուած ըլլալուն համար եւ Չինական կառավարութեան պատրաստակամութիւնը կը յայտնէր նոր ծանուցագրի մը ամէն կերպով նկատողութեան առնուելուն։ Կը կարծուի որ յիշեալ միջադէպը նպաստէ իտալիոյ Չինաստանի մէջ ունեցած քաղաքականութեանը, որովհետեւ այս անգամ Մանտարինները պիտի աշխատին իրենց նախորդ կողմութիւնը կերպով մը մոռցնել տալու համար նոր ծանուցագրի մը պահանջումներու մասին նուազ հակառակութիւն ցոյց տալ։

Չի ծանրանալով այսօր կարգ մը ամերիկեան խնդիրներու վրայ, որոնք Եւրոպան կը զբաղեցնեն՝ անցնինք Չինաստանի։

ՉԻՆԱՍՏԱՆԻ խնդիրը Եւրոպայի դիւանագիտական սեղանին վրայ եղած խնդիրներուն ամէնէն կենսականը և ամէնէն կնճռոտն է միանգամայն Դեռ շատ բանակցութիւններ պէտք է տեղի ունենան Եւրոպայի դիւանագիտական շրջանակներուն մէջ, դեռ շատ ոտընձգութիւններ պէտք է կատարուին

Չինաստանի մէջ Եւրոպական պետու-
թիւններու կողմէ, որպէս զի Չինական
խնդիրը թէ Եւրոպական պետութիւն-
ներու և թէ Չինաստանի կառավարու-
թեան համար աւելի սուր կերպարանք
մը ստանայ, որով միայն կարելի պիտի
ըլլայ թերեւս լուծել զայն: Առ այժմ
քանի մը նաւահանգիստներու դրաւումը
կամ ազատ հռչակուիլը և օտարական-
ներու համար երբեմն նոյն իսկ ստիպ-
մամբ ձեռք անցուած թողտուութիւն-
ները Չինաստանի պէս անծայր ու ան-
շարժ կառավարութիւն մը յուզելու,
տաքցնելու բնութիւնը տակաւին կարող
չեն յունենալ: Հոն ամէն ինչ պէտք է իր
ամէնախիստ, ամէնակոշտ ձեւովը կա-
տարուի, որպէս զի որ և է ազդեցութիւն
մը կարելի ըլլայ ընել չինական կառա-
վարութեան վրայ:

ԱՆԳԼԻԱ, ԵՒ ՌՈՒՍԻԱ, եւ որոնք ամէ-
նէն աւելի իրարու դէմ ելած են Չինաս-
տանի մէջ, և որոնք ամէնէն բուռն կեր-
պով կ'աշխատին Ծայրագոյն Արեւելքի
մէջ իրենց ազդեցութեան շրջանակները
լայնցնելու համար: Երկու պետութիւն-
ներու համար անհուն կարեւորութիւն
ունի Չինաստան իր հողային սեփա-
կանութիւններով ու առեւտրական գոր-
ծունէութեան տեսակէտէն: Ուրեմն Չի-
նաստանի խնդրոյն շուրջ Անգլիոյ և
Ռուսաստանի միջեւ եղած զոհողութիւն-
ները միայն երկուստեք կարելի են ըլ-
լալ, միակողմանի զոհողութիւններ ոչ
Ռուսաստան և ոչ ալ Անգլիա յանձնա-
ռու կ'ըլլան կատարել: Եւ երբ Չինաս-
տանի շուրջ Բեթերսպուրկի և Լոնտոնի
կառավարութիւնները իրարու հակոտն-
եայ քաղաքականութեան մը մէջ յամա-
ռին, կրնայ ատիկա նոյն իսկ խզումի մը
պատճառը դառնալ Եւրոպայի համար
ալ մեծ յեղաշրջումներու թուական մը
բանալով:

Ու ճիշդ այս ճշմարտութիւններուն
ըմբռնութիւնն է որ մանաւանդ վերջերս

սոյն երկու արքունիքներու մէջ ձգտում
մը կայ իրարու մօտենալու և ձեռք
ձեռքի տուած գործելու Չինաստանի
մէջ: Քանի մը թերթեր արդէն կը հրա-
տարակէին այս իմաստով հեռագիր մը,
որ զուրկ չէ իր նշանակութիւնը ունե-
նալէ:

Ասոնք են ներկայ քաղաքական
կեանքի գործունէութեան գլխաւոր
գիծերը, որոնց քով կան նաեւ երկ-
րորդականներ ալ: Երկրորդական գի-
ծերը սակայն քաղաքական կեանքին
մէջ չունին այն նշանակութիւնը ինչ որ
պատկերի մը մէջ կարող են ունենալ:
Միջազգային քաղաքական կեանքի
սկզբունքն է արդէն ներյոյժ ըլլալ ու-
րիշներու վրայ ազդելու համար: Չի-
նաստան քաղաքականութիւն մը չունի
Եւրոպայի համար, քանի որ Եւրոպա
կը հարկադրէ զինքը իր քաղաքանու-
թեան անսալ, որով եթէ նոյն իսկ քա-
ղաքականութիւն մը ծնունդ առնէ Չի-
նաստանի մէջ, թելադրողը միշտ Եւ-
րոպա է կամ Եւրոպական մեծ պետու-
թիւն մը:

Միջազգային ընդհանուր քաղա-
քականութեան դուրս, քաղաքական
աշխարհը սկսած է նաեւ դադափար-
ներով ալ որոճալ: Ձէնընկեցութեան
առաջարկը ու այդ առաջարկին հետե-
ւանք կազմուելիք դեպքանական խոր-
հուրդը պիտի զբաղի բոլոր քաղաքա-
կան հաշիւներէ վեր խնդրով մը, այ-
սինքն այն խնդրով թէ ինչպէս բոլոր
պետութիւնները կարող են չափ մը
դնել իրենց սպառազինումներուն, որ
միեւնոյն ատեն Եւրոպայի տուրքերու
տակ բեռնաւորուած ժողովուրդներուն
համար բարօրութեան մը սկզբնաւորու-
թիւնը պիտի ըլլայ: Գեոպոլիտիկոս
գիւ գումարուելուն պիտի յայտնուի թէ
զէնընկեցութեան սոյն առաջարկը մին-
չեւ ո՞ր աստիճան կարող պիտի ըլլայ
ընդհանուր ընկերական բարենորոգման
մը սկզբնաւորութիւնը ըլլալ:

ՎԵՐՋԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մի անգամ ընդ միշտ կը ծանուցանենք մեր բոլոր ընթերցողներուն որ մեր ի ստաբէ հրատարակած գրքերը իրենց դրկուելու համար մեզ որ եւ է դիմում ջընեն , որովհետեւ նիւրապէս անկարելի է թերթին համար , այդ յանճարարութիւնները կատարել :

« Naturkundliche Volksbücher ». Allen Feunden der Natur gewidmet von L. Busemann. 2 Bände. 2. Auflage mit 537 Holzstichen. Berlin, 1899. 10 mk.

« India. What can it teach us? ». By F. Max Müller. Cheap reissue. London, 1899. 5 s.

« Pour devenir Médecin ». (Bibliothèque littéraire de vulgarisation scientifique); par Dr. Michant. 192 pages. Paris, 1899. Fr. 1.

« Questions politiques », par Emile Faguet. 336 pages. Paris 1899. Fr. 3.50.

« The wonderful century », its successes and its failures», by Alf. Russel Wallace. 2nd edition. 416 pp. 7 s. 6 d.

« The union of Italy, 1815-1895 ». by W. J. Stillman, with four maps. London 1899. 6 s.

« L'anneau d'Améthyste ». par Anatole France. 419 pages. Paris 1899. Fr. 3.50.

« How to get strong and how to stay so ». by W. Blaikie. Entirely revised and very much enlarged edition. Illustrated. 500 pp. London 1899. 6 s.

« La force ». par Paul Adam. Paris. 1899 fr. 3.50.

« German higher schools ». by J. E. Russel. 455 pp. London. 1899. 7 s. 6 d.

« L'ignorance et l'irréflexion ». essai de physiologie objective. par L. Gérard-Varet. Paris 1899. 3 fr. 5.

« Dorine » par André Theuriet, Paris 1899. 3 fr. 50.

« Copenhagen, la capitale du Danemark » publié par l'Union danoise des touristes, Paris 1899.

« La vie et l'art des Scandinaves ». par M. Gandolphe. Paris 1899. fr. 3.50.

« Voyages au pays des mines d'or (Le Klondike) ». avec 40 illustrations et 2 cartes. par Raymond Auzias-Turenne. Paris 1889. fr. 4.

« Das Weib ». in der Natur-und völkerkunde. Anthropologische studien von Dr. H. Ploss 6. Auflage nach dem Tode des verfassers bearbeitet und herausgegeben von Dr. Max Bartels. Leipzig. 1899. 26 mk.

« A history of physics ». By Florian Cajori. 322 pp. London 1899. Macmilan. 7 s. 6 d.

« China and its future ». By James Johnaton. 130 pp. London 1899.

« A dictionary of british folklore ». Traditional games, 2 vols. Ed. by G. Laurence Gomme, 551 pp. London 1899. 25 s.

« Jean-Jacques Rousseau and the Cosmopolitan Spirit in literature ». by Joseph Texte. Translated by J. W. Matthews. 393 pp. London, 1899. 7 s. 6 d.

« China ». By prof. R. K. Douglas, (The story of the nations) 451 pp. London, 1899. 5 s.

« Psychologie de la colonisation française dans ses rapports avec les sociétés indigènes », par Léopold de Saussure, 3 fr. 50. 1899.

« La France intellectuelle », par Henry Béranger. 3 fr. 50. 1899. Paris.

Արաճնատէր Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ

Տպագրութիւն Տ. ՃԻՎԵԼԵԿԵԱՆ

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Կը խնդրուի « Մասիս »-ի բոլոր գործակալներէն, որպէս զի եթէ իրենց քով աւելցած օրինակներ կան Բ. Թիւէն, հաճին անյապաղ մեղ հասցընել, որովհետեւ սպառած է նոյն Թիւը :

« ՄԱՍԻՍ » ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՑՈՒԱԾ Է

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 Թիւ (768 էջ)	44 ղրշ.
Վեցամսեայ	12 " (384 էջ)	22 "
Եռամսեայ	6 " (192 էջ)	11 "

ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 Թիւ (768 էջ)	54 ղրշ.
Վեցամսեայ	12 " (384 էջ)	27 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 Թիւ (768 էջ)	12 ֆրանք
Վեցամսեայ	12 " (384 էջ)	6 "

« ՄԱՍԻՍ » Ձեռ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂՐՇ .

« Մասիս »-ի վերաբերեալ ամեն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել Թերթիս տնօրէն-խմբագրին

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆԺԵԱՆ

Սթամպոլ, Պապը Ալի ճատտեսի, քիւ 20
Stamboul, Avenue de la S. Porte No 20

Թերթիս կողքին վերջի երկու երեսները ազդարարու-
թիւններու յատկացուած են : Գիւններու համար դիմել Տնո-
րէնին, Սթամպոլ, Պապը Ալի ճատտեսի քիւ 20 :

Կ. Ս. Իւթիւճեանի թարգմանած գրքերէն հետեւեալները մնացած են և ասոնք ալ սպառելու վրայ:

Թափառական Հրեայ	4	Հատոր գին	50 դր.
Ընտանեկուրկ	2	" "	12 "
Կարմիր մարդոց երգումը	2	" "	10 "
Ամուսնութիւնք փարիզի	1	" "	5 "
Սկզբունք Քաղ. Տնտես.	1	" "	3 "
Պատ. Օրինագիրք	1	" "	2 "

Կը գտնուին Պոլսոյ հայ գրաւթանաւաց քով:

ՀԱՐԲՈՒԹ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ



Վերջին քանի մը շաբաթուան միջոցին հարբուխի համաճարակ մը կայ Պոլսոյ մէջ. ամէն ընտանիքի մէջ գրեթէ հարբուխ ունեցող մը կը գտնուի: Ուստի կը յանձնարարենք որ խնամք տալու ամէն ընտանիքի մէջ Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունէն առուի մը թէյ ունենալ, որպէս զի ատով միջոցը ունենան հարբուխի համաճարակին դէմ մաքաւելու: Յիշեալ վաճառատունէն եղած թէյի բաժակ մը, քիչ մը ոռմով երբ տաք տաք խմուի, կուրծքը կը կակուղցընէ և ցուրտի դէմ հակազդող միջոց մըն է:

Ուշադրութիւն վաճառատան մարքային:

Վաճառատունը կը գտնուի Ճէլալ պէյ խանի տակ. քիւ 10